
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

ԼՍԳՐԱՐԻ



ՀԵՏՈ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

891-99


12172


S-26

Supnugb, U.

~~Supnugb~~

htypn





V



ՄՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

891.99

S-26

ԱՏՈՒԿԱԼՈՒ Է 1981 Ք.

ԱՄԵՐԻԿԱ
ԷՆՏՈ

12172
A 29908



ՀԱՅԳԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1948

С. ТАРОНЦИ
ПОСЛЕ ГРОЗЫ

(На армянском языке)
Армгиз Ереван, 1948 г.

2491



ՊՈՂՈՏԱՆԵՐ





ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՄԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Այս հին մուրազի վրա՝
Ջանքի,
Տառապանքի,
Եվ մաքառման բովում
Երկաթվեցիր դո՛ւ,
Հաղթական բալլեցիր դո՛ւ,
Պատմության կոխկրտված ուղիներով,
Դու, մարդկության նո՛ր հասակ,
Մե՛ծ Հոկտեմբեր՝

Այնտեղ,—
Ռուսական ազատաշունչ ստիպներո՛ւմ
Մեվեցիր դու, Պիտերում բազմաթխոր
Եվ գյուղերում խաղաղ,
Եվ շեկ, ինչպես արևաբիր Մուրմեցը,
Փաղփաղեցի՛ր դու
Գիշերային ամպրոպներից անցած։

Դու դեռ մանուկ էիր,
Երբ քեզ խեղդեղ ուզեց Անտանտան,
Ջառամած աշխարհը օղակեց մարմինըդ
Երկաթով
Ու դավով,
Քո հողմածեծ դրոշմ,
Արյունով ու արեգակով ծփուն՝
Անցավ զարհուրելի մրրիկների միջով
Հաղթանակած։

Ճրելով պատմության թանձր մառախուղը՝
Որպես նոր առավոտ ու ե՛րգ

Բացվեցիր դու,
Զրբնգացիր դու,
Եվ կյա՛նք եղար դու,
Եվ կառուցո՛ւմ եղար դու,
Եվ դեպի բեզ գարձրից իր աչքերը
Տառապած, բայց պայքարող մարդկությունը:

Զդուտ, ինչպես ժամանակի ձեռքը,
Տոկուն, ինչպես տարածությունն անթեր,
Կանգնեցիր դու
Արեգակնայի՛ն փարոս:—
Քո շողերի՛ տակ,
Քո ջերմությա՛ն մեջ
Խարսխվեց կյա՛նք մի նոր՝
Որ, նորոգելով ներկան աշխոժ,
Աչքերը հառեց Ապագայի
Կայույտ կատարներին:

Դու բայլո՛ւմ ես ահա,
Որպես նոր պատմություն երեսնամյա հասակի
Հաղթանակի շողշող զգեստներով,
Դու մկանուտ ես, ինչպես պողպատը,
Եվ ջղերով, էլեկտրական խուրձիր,
Հաստն մինչև աչիտեղ,
Որտեղ նախնադարյան իր ճոճքի մեջ
Մարդը վաղնջական իր երգն էր մրմնջում:

Մուսական սեգ հասակով,
Պայծառ, անեղբայրական մտքով մեծ ուսական
Դու բայլում ես հաղթ՝
Բրիտանական պառավ խմբերիայի
Չերչիլների հաջոցների միջով:
Դու բայլում ես ահա
Ամերիկյան խավարամուլ կանաչ խանդի,
Խռովմունքի,
Գաղազմունքի միջով—դեպի առաջ:

Ահա աշխարհը ճեղքված,—
Կյանքի՛ և մահվան աշխարհներն իրար դեմ,
Բաշխաններից մինչև Բրիտանիա,
Մինչև շոալաշող երկիրը՝ Աֆրիկան,

Հելլադայից մինչև Երկիրն Հրո
Հորձանքվում է, ինչպիս Թաթառաշունչ օվկիան:

Այս հին մուրալի վրա՝
Դու կանգնել ես հաստատ
Ինչպես ժամանակը սովետական.
Դու կանգնել ես խրոխտ՝
Պսակված
Պայքարներդ,

Մաքառումներդ հաղթանակներով...
Եվ մարդկության բախտի ծանր դրոշմ ձեռքիդ՝
Քայլում ես դեպի դարերը,
Անմահացնելու մարդկային սերունդը
Հանուն ազատ կյանքի՝,
Ջանքի՝,
Եվ վայելքի՝
Ընդմիջտ վերանորոգ
Հողագնդի վրա...

Պ Ո Ղ Ո Տ Ա Ն Ե Ր

Օ՛, մոռացվա՛ծ երգիչ,
Որ անցնում ես հիմա այս լայն փողոցներով,
Քո երգը հիշո՛ւմ ես—
Քուշան,

Քուշան մութ ու անձուկ,
Քուշան նեղ ու գալար,
Քուշան:

Ու թեև շատ անգամ այդ անձուկում կեղտոտ
Սփռում էր արևը իր շողքերը մաքուր,
Ու թեև շատ անգամ
Անցնում էին կանայք, թրե հոներե՛ր՝
Հոներերի տակ վառած երկու սաթե քուրա,
Ու թեև շատ անգամ
Գնո՛ւմ, ձգվո՛ւմ, կորչո՛ւմ, երկարո՛ւմ էր
Երազային հեռուն.

Սակայն նույնն էր մնում
Քուշան:
Քուշան մութ ու անձուկ,
Քուշան նեղ ու գալար,
Քուշան:

Օ՛, մոռացվա՛ծ երգիչ,
Արդյոք անձուկն այդ խոր
Չէ՛ր իմ երկրի մարդու մտահորիզոնը փակ,
Չէ՛ր նախրան թնկոտ ու ծուլլ երազանքի
Սահմանափակ երգի թախծոտ մի հանգ,
Որ գնում էր փխրուն պառավների
Դանդաղ քայլերգի հետ
Մեռնելով կավաշեն պատերի տակ,
Կամ թե փայտյա կոպիտ դարբասների ճեղքում...

Արդ, մոռացված երգիչ,
Իզուր ես դու թախծում այս լայն փողոցների
Մշտառույզ ու եռուն մայրերով անցնելիս,
Նայի՛ր, այստեղ ահա
Այս թաղում, ուր դեռ կան տներ գորշ ու գաճաճ,
Եվ լաղմահարկ տներ, պալատների նման,
Շքեղ ու ծանրանիստ,
Սլանում է լայնեղր պողոտան նոր բացված:

Ինչպես կապարյա գետ, որ անշարժ է անվերջ,
Ինքը կանգած է հար և լոկ կյանքն է գնում
Իր դաշնությամբ,
Մերթ մեղմ, ինչպես սիրո երգը,
Մերթ հախուռն, հանց ջանքի հրափողփող երգը,
Չգվում է լայն ու խոր,
Չգվում է լույս ու բաց
Այս պողոտան:

Օ՛, թերևս ոչ մի դարում,
Ոչ մի անգամ,
Այնքան հակոտնյա չէ կյանքը վերանորոգ,
Կյանքն այս, որ անցյալի ծանր մութից
Շառաչելով ելած,
Շառաչով գնում է դեպի դալիքը մեծ:

Ահա ապրում, շնչում, անվերջ կովում
Ոգորում են դաժան
Հինն ու նորն իրար հետ,
Հինն ու նորն իրար մոտ,
Եվ ինչպես երկաթյա անհերքելի օրենք՝
Ինչպես սերունդների հաջորդական կանոն՝
Հինը՝ թեև կովով, դեպի մահն է գնում,
Եվ նորը՝ դեպի կյանք...

Մեր նոր պատմության պես,
Զարմանալի այս մեր նոր պատմության,
Որի ուղին բաց է դեպի գալիքը մոտ,
Պողոտան այս լայնեղր
Եվ այլ պողոտաներ,

Ահա շնչեղ, մաքուր արեգակի ներքո,
իբրև ժամանակի ձեռքեր առֆալտացած
Հար՝ առաջ են ձգվում,
Իրենց ընթացքի մեջ դնելով անխուսափ
Վերացումը բոլոր բուշաների,
Բուշաները ծռող կավե տների ալյու
հաժամուժը խոռվ և ասիակահու:

Նայիր Երևանի,
Երևանին չքնաղ Երևանի
Պողոտային այս նոր, և՛ լայն, և՛ լուսավոր,
Որին վեհուժնուն է ներշնչում մեծ
Առաջնորդի ահուն հավերժատև
Պողոտային այս նոր,
Որին ուղեկցում են աչ ու ձախից
Կամ դեպի նա ձգվում, բայց և տհից կեցած,
Բուշաներ դեռ բրջոտ,
Որոնք ձեռնակարկառ կյանք են հայցում...

Անջատվելով եղբայր փողոցներից՝
Երկարում է այս նոր, անանձուկ պողոտան,
Դեպի գեղահրաշ ու դանդաղահր Նորքի
Այգիները մինչև...
Շփվում է Բաղրամյան պողոտային թովիլ
Չքնաղ պողոտային,
Որ ճեղքելով կանաչ ծովի մացառուտը,
Չգվում է իբրև գետ,
Հանդարտ հոսում է վեր՝
Դեպի կածանները,
Շավիղները,
Դեպի արահետները, առասպաբներն անտես...

Ահա և արևոտ այս պողոտան,
Որ ձգվում է հսկա կայարանից,
Երկաթուղու սուրձայն սուլիչների ներքո,
Տրամվայի շաշուն ընթացքի հետ,
Ավտոների անվերջ հոնդիչների տակ,
Եվ կամ դանդաղաշարժ հեռից դեռ մնացած
Երկանիվ սալակի միօրինակ հրդի
Հանդերդի մեջ:

Եվ քայլում են մարդիկ,
 Պողոտայից ի վեր,
 Պողոտայից ի վար,
 Եվ նոր գարնանային ծաղկեփնջի նման
 Դպրոցական մի խումբ անցնում է շտապով
 Բերկրություն և աշխույժ սփռելով մայթերին...
 Դալար պատանիներ,
 Հագած ղինվորական կանաչ համազգեստ
 Առնական երգերով, խումբ-խումբ, ինչպես
 Երգի շար-շար տներ,
 Պողոտան լցնում են շարժուն ութմով...
 Անցնում է մի պառավ, գուցե ութսունամյա,
 Քայլում է նա վստահ, առանց ցուպի,
 Եվ կույրը քայլում է, ինչպես աչք ունեցող
 Երգի հեղինակն այս,
 Անտեսնիլով ձեռքի գավազանը նույնիոկ...

Օ՛, մոռացված երգիչ,
 Պողոտաներով այս՝ անցնենք մենք միասին,
 Պողոտաներով այս,
 Որոնց զույգ ավերին հալթ շներեր են կանգնած,
 Եվ շներերի կողքին ծեծ կերած որբի պես
 Խարխուլ տներ, խուղեր ու խրճիթներ...

Պողոտաներով այս քայլենք մենք միասին,
 Քայլենք, որպես վարպետ և աշակերտ,
 Որոնք դեռ ապրում են իրարու հետ,
 Ինչպես Երևանը, քաղաք և մայր,
 Ինչպես Երևանը, որ անընդհատ,
 Իր բարձրացող նորով՝ տիրապետում է այդ
 Մենուդ հնի վրա...

Քուլաչի հակառակ՝
 Այստեղ լույսն է շնչում,
 Այստեղ լույսն է շնչում, իբրև արեգակի
 Անբավ արյունը հորդ, որ այս փողոցների
 Երակների մեջ հոսում է մշտապես,
 Ցերեկն՝ իբրև ցերեկ.
 Դիշերն իբրև ճերմակ այս սյուներից կախված
 Էլեկտրական լամպեր...

Նրանք,
Պողոտաները այդ,
Մեր այսօրվա կյանքի ուղիներն են,
Հզոր ու լայն երթն են մեր այսօրվա կյանքի:

Պողոտաները այդ,
Որոնց երգիչը դեռ նոր պիտի գա,
Երբ շեն լինի արդեն բուլաները անձուկ,
Մահվան դատապարտված խարխուլ խրճիթների
Կավն այս ամբոխը,
Եվ այդ երգիչը նոր
Իբրեւ արդեն ավարտ, արդեն կերպ ստացած,
Նոր ջանքի և սիրտ հզոր գոսան,
Կերդի մեր այսօրը, որպես անցյալ,
Եվ մեր վաղը, որի ներդաշնակ բալլերգը
Պողոտաներով այս դեպի մեզ է գալիս...

Ք Ա Ր Տ Ա Շ Ն Ե Ր Ը

Փողոցը ձգվում է նրանց բալլերի հետ։—

Ծրեանյան ամուսն առավոտ է,
Տանիքների վրա,
Փողոցներում
Անտես մի ձեռք կարծես
Բորբորել է արևի խարույկը մեծ,
Արևի խարույկը, որ դարերով
Թրծել է այս հողը
Եվ այս բարն է թրծել,
Կրքոտ՝ շշնջացել կանաչ այգիների
Շողի մեջ հեացող սաղարթների հետ լայն։

Փողոցը ձգվում է նրանց բալլերի հետ։—

Գորշ գոգնոցներն հագին
Քարտաշներ են գնում։

Ահա եռուզեռից՝ ավարտումի ձգտող
Կիսավարտ այս շենքը,
Որին առժամանակ կիսատ թողեց
Պատերազմի ճիրանն ամենավեր։

Շենքը,
Այս վիթխարի՝ն
Համառ սպասում էր երիտասարդ մարդու
Հասունության ձգտող խոր ըղձանքով,
Սպասում էր, ինչպես իր հարևան
Փողոցին շուր տվող շենքերն
Եռհարկանի,
Քառհարկանի,
Հինգհարկանի։

Եվ այս կիսավարտը՝
Նայում է ինքնիրեն գեղեցկուհու՝ պես այն,
Որ կիսով հագնւած՝
Հպարտ է սակայն իր գեղեցկութեամբ:
Նայում է ռոբերտի տակ մնացած
Ասիական խուղերի խառնամուժին,
Որոնք շուտով պիտի
Էկսկավատորի կուռ գրոհով
Այս լուրթ ու լայնաշունչ պողոտայի եզրից
Անհետանան, մինչև ա՛յն ժամանակ,
Երբ սերունդները նոր
Մեր այս մաքաւումի՛,
Հպարտանքի՛
Պալատները, գույե, սեպեն խրճիթ ու խուղ...

Քանի՛, քանի՛ անգամ
Ես տեսել եմ նրանց,—
Այս տներին,
Քանի՛ անգամ:
Բայց արդ, աչքերըս փակ՝
Ես ուզում եմ հիշել բոլոր նրանց,
Որոնց երեկ սրբից ձեռքը մեր շինարար,
Սակայն նրանց տխուր սիլուէտներն են
Կանգնում աչքիս առաջ,
Այնպե՛ս դողոց ու գորշ,
Ինչպես Նոյեմբերից առաջ եղած
Հայաստանի որբը,
Հայաստանի այրին:

Ահա՛ վեր է ելնում հինգհարկանի շենքն այս՝
Այլ հին տնակների վրա,
Որոնց երեկ սրբից
Մուր քլունգը, ինչպես երկաթի հատու շե՛շտ,
Բահը,
Եվ այս էկսկավատորը,—
Պապենական գործիքների նոր թշնամին:

Քարտաշնէ՛րը
Զրնգացնում են մուրճերն իրենց ճարճաւ,
Նոր տեսք տալիս այս կոպիտ քարին,
Եվ մարմարին ալս,

Եվ գրանիւին ալա, որ սեղմած կամքն ի բուռ
Մանր ու դժնի բազմում է պատի մեջ:

Երկաթով

Ու կրով

Ու շաղախով

Բարձրացնում նոր պատեր,

Որ զընդա կյանքը,

Ինչպես երկաթի և լուսի երկերը արգ

Զրնգում է

Հին երկրիս արդեն անհետացող

Կավի,

Փայտի

Եվ խավարի վրա:

Ահա՛ խստահալաց որձաքարը,

Ամուր, ինչպես մեր այսօրվա ոգին:

Ահա՛ հուրհրացող տուֆաքարը,

Կարմիր, ինչպես բախտը մեր այսօրվա:

Քարտաշնե՛րը,

Նրանք անվերջ տաշում,

Հղկում,

Որմնադիրների հետ ագուցում են

Էպիկական մեր որձաքարը,

Եվ տուֆաքարը մեր ընարական:

Փողոցը զնգում է նրանց մուրճերի հետ:

Նրա՛նք,

Քարտաշնե՛րը,

Գորշ գոգնոցներն հագին,

Ջղուտ ոտքերն իրենց աքցան արած՝

Տաշում են անընդհատ:

Նրա՛նք,

Քարտաշնե՛րը:

Ահա քարտաշ Սարոն,

Զինվորական կեսնոր գլխարկը դեռ գլխին:

Անբաժան հնգաթև կարմիր աստղից:

Նրա վարժ զարկերից

Հաճախ են բորբոքվում կարմիր կաճեր,
Եվ այդ կարճ կայծերի ժամին հաճախ
Սմոյենակն է հիշում,
Հիշում է մարտերը Տուլայի տակ,
Ստալինգրադն է հիշում,
Որտեղ գերմանական դարչնագույն ողնները
Փշրվեցին հզոր

Ահա և հին քարտաշ
Ուստա Ավոն,
Շիրակեցի ուստա Ավոն,
Որ քառասուն տարի
Կորաղեղ կամուրջներ է կառուցել,
Կառուցել աղբյուրներ քաղաքում ու գյուղում,
Զվարթ,
Կատակասեր ուստա Ավոն
Հունաստանից եկած քարտաշ Գրիգորին
Ասում է հայրաբար,—
— Օ'ղուլ,
Մենք հնգամյակ ունենք,
Տաշն',
Տաշն',
Երեկըն՝ ուրիշի, էսօր՝ մեզի՝ համար

Փողոցն զնգում է նրանց մուրճերի հետ

Եվ շինարար այս եռուն ոլորտի մեջ,
Մարդիկ, նման շարժուն շեշտի,
Շարժուն հարցականի և կարկինի,
Փորում
Տաշում,
Շարում,
Լրիվություն տալիս շինվող շենքին,
Եվ բերկրանք են բաշխում բոլոր նրանց,
Որոնք պիտի ապրեն վաղը այնտեղ

Ամռան արևի տակ,
Երբ փողոցով հնում, հոսում է ջերմ
Մանրալիք գետը շոգի և հեղձ տոթի,
Նրանք,
Քարտաշները,

Գորշ զոռնոցներն հագին՝

Տաշում,

Հղում

Մի գեղի պատերն են հղում

Քարերն իրենց քառակուսի

Քանդակազարդ ու կոր:

Մի գալիք սերունդը

Որ անդամանք պիտի նալի շենքերին այս,

Բայց և երախտավոր՝

Ամեն տաշվածքի և շարվածքի մեջ

Կփնտրի անուններն այս հասարակ մարդկանց,—

Որոնք անխոնջ,

Անդուլ

Մարտունակներ՝ մեծ շինեցին շենքերն այս՝

Կավե դարի վրա՝

Կոփելով երկաթի,

Շողու,

Լույսի,

Ռեզինի դարը ժիր,

Որի մազնիսները ահա՛, ահա՛,

Նրանց ասպազալին, հավերժին է քաշում:

Փողոցը զնգում է նրանց մուրճերի հետ



ԵՐԳԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Կապո՛ւյտ հագիր,
Իմ բեկերուհի՛,
Իմ շատվա՛ծ սերս

Երկնքի մի կտոր ներս հոսեց իմ գոնից,
Երկնքի մի կտոր.
Այնքա՛ն պայծառություն,
Այնքա՛ն կոբով,
Այնքա՛ն հրճվանք բերեցիր դո՛ւս

Կապո՛ւյտ հագիր,
Իմ երգա՛ծ սերս

Վաղո՛ւց էր այս երկփեղկ դուռը
Հարված լուսնյամբ սպասում
Երգի նման ներդաշնակ քո քայլերին.
Եվ դու եկա՛ր,
Եկար, ինչպես դյուտ աշած մանուկը՝
Մանկական ժպիտներով.
Խախտանք և ցնծություն է իմ շուրջը,
Քանզի դու՛ սիրո՞ւլ եկար:

Կապո՛ւյտ հագիր:

Ահավասիկ խաղաղությունը կապտազգեստ.
Այնքա՛ն վեհ և իրական:
Ահավասիկ:

Մայիսը հրճվում է փոշոցներում,
Մեր նորաշեն դյուղերի մեջ,
Եվ մարմարյա պալատների առաջ.

Ահալասիկ,
Այնտեղ,
Դաշտի կապույտի և ոսկու մեջ՝
Շինականը՝
Հաղարամյա հողսի ժանգից սրբոված:
Արեով թխացած աղջիկներ ծաղկազարդ՝
Անցնում են գլուզի փողոցներով,
Եվ պարմաննեղ, հովիվներին նման առողջ,
Հախուն ցնձում են հորդ:

Ահալասիկ քաղաքները
Հայն ու խոր,
Սպիտակ արվարձաններով տարածուն,
Քաղաքները, որ ճիրաններն իրենց
Վերածել են րարի և հումկու ձեռքերի,
Վերածել են հույսի և օգնության
Նայի՛ր, նրանց աղեղնաձև հորիզոնին
Ծիծաղում է ոսկեխառն կապույտը,
Կապո՛ւյտը,
Հայն ու խոր,
Կապո՛ւյտը:

Կապո՛ւյտ հազիր,
Եվ հրճվի՛ր հրճվանքով,
Իմ սն՛ր,
Իմ ե՛րգ:

Քանդի, ինչպես ծովում նետված քարը,
Դանդաղ՝
Դեպի սրտի հատակն են իջնում
Պատերազմի արթած հառա՛չն ու կսկիծը,
Արցունքն ու աղերսը:
Եվ Հույսը,
Մրտադին մոր նման,
Քարձրացնում է խաղաղության կապույտ աղջիկը՝
Հաղթության դափնին ի ձեռ:

Կապո՛ւյտ հազիր,
Կապո՛ւյտ,
Չքնադազեն՛դ դուտոր,

Քեզ նման նա մտաւ
Հայրենիքիս անպարադիժ հորիզոնից
Որպէս վրեժ ու որպէս հատուցում,
Քեզ նման,
Որ գայտույթմբ
Կապույտով է լցնում սրտիս տինդերքը,
Քեզ նման, որ սիրով,
Հուսով,
Հուսով
Ողորդւմ ես իմ տան ամեն մի խորշ

Կապույտ հագիր.
Թող լուծվի թախիժդ՝ կապույտի մեջ
Ինչպէս սև ու մռայլ ամպը,
Որ ցնդում է երկնի խորութեան մեջ,
Կապույտ հագիր:

Ահա վասիկ արտայտը
Կյանքի վաղորդյանով դեպի վեր է ճախրել՝
Երգելու սեր,
Քնքշանք,
Ֆիլ բաջաթե առժիվն է շառաշում
Հայրենիքիս հորիզոնից հորիզոն:

Կապույտ հագիր:

Եվ ինչու,
Ինչու տխրել, իմ սիրելիս.
Ահա բաց են աշխարհի հորիզոնները.
Եվ կյանքը կապույտով բայում է
Խաղաղութեան թովիչ դաշտերով
Դեպի գալիքը,
Դեպի հազարամյա անբշտնքը,—
Հասնում զայաբարով,
Անօրինակ պայքարով՝
Ի երջանկութուն ո՛չ միայն մեզ՝
Այլ բոլորի, որոնք գալիքն են հայցում:

Կապույտ հագիր,
Իմ սեր, -
Ֆիլ սև վարսերդ՝ թանձր տխրութեան պես՝

Ոսկեդօծի՛ր արևի շառագունով,
Երևնդայան այդ անտառը՝
Մաղկաղարդի՛ր կապույտ ծաղիկներով,
Հրճի՛ր ներկա բորբոք լույսերի
Եվ ապագայի կապույտ կանթեղների հանդեպ:

Կապո՛ւյտ հագիր,
Սիրելիս:
Կապույտն հար ուղեկցում է երխտասարդի՛ն:
Առնական արևի տակ՝
Ահալասիկ քալում են ճկուն դուսարեր,
Եվ պարմաններ պնդամեջը,
Եվ անգամ ծերը, ուր դեպի հողն է հակված՝
Ուղղում է մեջքի կոր աղեղը՝
Խնդուքյան ամոքիչ ձեռքով:

Կապո՛ւյտ հագիր,
Իմ երկրի դո՛ւստր:

Օ՞, թեև այս շողը,
Որ սննյակի հատակին պառկել է շեղբի պե՛տ,
Եվ մեզ արևային հնոռներն է հրավիրում
Կապույտ խնդուքյան այս օրերին՝
Ջգաստ լինենք սակայն,
Քանզի՛ ի դեմ մեզ՝
Քինով և ատեղությամբ գալարվում է ահա
Աշխարհը ծերացած,
Որ պայքարի վերահաս մրրկով՝
Ի հատուցումն հանուր մարդկության տառապանքի,
Փլլի պիտի շուտով
Սերունդների առաջ,
Ուրվագծելով իր հասանելի գաղաթները:

Կապո՛ւյտ հագիր,
Իմ քնկերուհի՛,
Իմ սե՛ր,
Իմ հ՛րգ:

ԵՐԵՎԱՆԻ ԶՈՒՐԸ

Այստեղ կա՛նգ առ,
Դո՛ւ, շողից հեացող տմենօրյա անցորդ:
Հրեղեն այս օդում
Ահալափիկ
Շնչում է քաղաքը երկաթյա թորերով,
Եիկացե՛լ են նրա փողոց-երակները,
Եվ ծառերը շնչաւո՛ւ
Սպասում են մարմանդ մթնշաղի,
Ալգիները սանրող աղամանդյա ղովին:

Այստեղ կա՛նգ առ,
Արևով փողփողուն տաք ասֆալտի վրա,
Դո՛ւ, գործից տուն վերադառնող
Ազատանի բանվոր
Եվ դո՛ւ, թիթեռի պես թևեր հադած,
Երևանուհի՛դ թուխ,
Եվ դո՛ւ, արծիվ ռազմիկ,
Որ քայլում ես հպարտ ու վաստակած
Հայրենի արևոտ փողոցներով:

Ահա՛ Երևանի հրաշք ջուրը,
Ջրացայտերն ահա, որոնց կոկորդներին
Դեպի վեր է ցայտում ընդերկրյա սառույցի
Թևերից ձերբազատ
Անվերջորեն թևեր արծաթյա դատրիկը.—
Երևանի ջուրը,
Որ և շառաշում է՛,
Որ և ծիծաղում է՛ մեղմ ու բարակ,
Ամառն հրաբորբոր արեղակի ներքո:

Վա՛նդ առ,
Եվ հիշիր հին
Անջուր Երեւա՛նը, որ կալն խնցու պես
Դարեր ի վեր՝
Անգոր՝ խանձվում էր խորշակ արևի տակ
Անջուր Երեւա՛նը,
Որ այգիներ ուներ դմրուխտավառ,
Մենավոր ծառերի կանաչ ցայտեր,
Իբրև ստվեր-աղբյուր՝
Եվ իբրև շուք՝
Հողից մեզ պարգևած:

Այն օրերից ի վեր,
Երբ շառաչեց Հայկյան սերունդը այս դաշտում,
Իբրև քաղություն և օջախի ծուխ,
Այն օրերից ի վեր,
Երբ այս Երևանը կոչվում էր Էրիանի,
Երբ մեր Թուխ ժայռերին ուրաշտական
Արքաները փոքրում, կոփում էին
Սեսլագրեր սուրծայր՝
Այն օրերից ի վեր,
Երբ մայր Արարատյան քաղմաբեղուն դաշտով
Անցնում էին օտար քարավաններ՝
Բերելով հեռավոր երկրների փոշին,
Կերպաս, սաթ ու ծարիր,
Այն օրերից ի վեր՝
Մինչև մեր անցյալը ո՛չ հեռավոր՝
Սերունդները չէին վայելում այս
Երևանի հրաշք ջո՛ւրը:

Հիշի՛ր, ընկեր, դու որ դալարությամբ
Կուսնում ես դալար ալս մշտահոս ջրին:—

Կայարանից ձգվող արևային այս մեծ
Պողոտայի տեղ, մի ժամանակ,
Դեղնականաչ, դադիր ճահիճն էր հորանջում:
Մանր ժանգաջրում
Հողում էին դորտեր կանաչ ու դորշ,

Եվ մլակների մի խելառ իրարանցում
Վրիժառո՛ւ,
Քինո՛ւտ,
Դառնում էր ջեռուցած և հալված օդի մեջ:

Եվ այս պողոտայում, որ ձգվում է առաջ
Դեպի լայնատարած արվարձանը,
Ռեզինի ու ծովսի արվարձանն այն՝
Դժոխային, դեղին ցխի դեռ էր կանգնած,
Որ ժանտ քարոնի պես մերթ հոսում էր տղմոս
Մերթ դառնում էր փոշի՝
Ծնելով լուկ ճապոտ աչքեր միայն,
Եվ պառավեն՝, ծերն՝ դեղնականաչ,
Եվ մանկիկներ, ինչպես ուռած տիկեր՝
Անջուր քայլում էին
Մահվան միշտ սուր պահած մանգաղի դեմ...

Հիշի՛ր այս բոլորը,
Եվ անհագ խմիր այս հրաշք ջուրը:

Երևանի ջուրը թեթև և օդային,
Որ հոսում է անվերջ ակնադրյուրից վճիտ,
Ջրացալտերո՛ւլ այս,
Բակերի մեջ բացված թուջե ծորակներից,
Ջովության զվարթով լցված ալգիներում,
Որտեղ մայրը անվիշտ՝
Ջուրն այս, իրրև ոգի, իրոն արծաթյա կաթ.
Ընծայում է մանկան իր կարմրաթուշ...

Երևանի ջո՛ւրը,
Սառնանուշ և զնդո՛ւն,
Երևանի ջուրը,
Որին նախանձով է նայում Կապրին,
Եվ Վիեննան, փողոցներով կապույտ:
Նախանձով են նայում սարերի սահանքով
Իջնող աղբյուրները, որոնք խանդից հուզված,
Կարկաչով կանչում են ծարավներին:

Ո՞ւր էր, ո՞ւր էր, ո՞ւր էր Երևանի ջուրը,
Որ դեռ արարչության հենց առաջին օրից

Պահվում էր երևնոս հողի ընդերքներում,
Մայր երկիրը արդյոք ե՞րբ թոթափեց մի օր-
Իր սառնաշունչ մատը այս սառը ջրի մեջ,
Մի գուցե դարերի ձյունն՝ ըր բաշխեցին
Արծաթները իրենց,
Սառնոթյունը իրենց,
Քաղցրությունը իրենց,
Իբրև անշահ սլարդև ծարաված շուրթերի

Երբ խմում ես ջուրը,
Երևանի ջուրը,
Բովում է երաշտված ծարավիդ մեջ
Ըղձալի անձրև է իջնում զվարթարար,
Այդ պահի՛ն է նաև մարդը խոր հիանում
Հեղին հանճարների անսուտ իմաստությամբ,
Որ ջուրն են համարել կյանքի հաստիչ տարրը,
Կրակի և օդի, հողի հետ միասին...

Եվ երբ երկրագնդի շորս ծաղերից եկած
Օտարներն են խմում,
Այսքան պարզ, հասարակ, առույգությամբ աշխույժ-
Երևանի ջուրը՝
Կամա թե ակամա, զորեղ զուգահեռով,
Իրենց ջուրն են հիշում, գուցե սառն ավելի,
Գուցե րա՛ղյր առավել,
Բայց գերված այս ջրի կախարդությամբ՝
Հեռանում են լցված հմայքներով բաղում,
Երազելով նորից մի կում ըմբռնանել...

Արդ՝
Մանոթ, անծանոթ ընկե՛ր,
Խմե՛նք ամեն անգամ Երևանի ջուրը,
Խմե՛նք ամեն անգամ՝
Անապատից եկած ծարավ մարդու նման,
Անձրևի սպասող շոր արտի անձկությամբ,
Եվ առաջին սիրտ խոստումին սպասող
Պատանու տենչանքով.
Խմե՛նք բնության այս արժաթաճոս գինին.
Երևանի ջուրը:

Ե Ր Գ Ը

Ի՞նչ կլինեիր կյանքը,
Եթե չլինեիր դո՛ւ,
Օ՛, ե՛րգ:

Առաջին մարդը, որ բիրտ էր ու բարակո՞ւփ,
Եվ վալրենի, ինչպես անկոխ ընթացունը,
Ա՛յն առաջին մարդը,
Որ ապրում էր մթին և սառը բարայրում,
Եվ ծառերից կախված նախնական ճոճքի մեջ,
Այն առաջին մարդը՝
Երգում էր բե՛ղ,
Օ՛, ե՛րգ:

Առաջին ակոսը, որ բացվել է հողին,
Ընթացել ևս դու այդ ակոսի հետ,
Որպես ոգու օդային թևթևություն:
Ընթացել ևս դու խուժողուժ որսորդների
Ազադականների՝ հետ,
Եվ կնոջ մոտ թրթռացել ևս դու,
Երբ նա,
Խոտով ու տերևով,
Ծածկել է մանկանը՝ քնացնելու համար:

Այսպես՝
Դարեր անվերջ հորձանվել է կյանքը,
Ինչպես միակտուր անհուն օվկիան,
Հետո տարանջատվել՝
Մնունդ տալով կյանքի տարբեր կղզյակների,
Որոնք, որպես խմբե՛ր և հորդանե՛ր,
Ցեղե՛ր, տոհմե՛ր,
Քայլել են ժամանակի, տարածության շավղով՝
Մնունդ տալով տարբեր ոգու
Տարբեր երգի:

Օ՛, ե՛րբ:

Օ՛, ե՛րբ, ոգու հավերժական աղբյուր,
Դու հնչեցիր շինական բրնձի դաշտերում,
Մերթ նուրբ, որպես լուսոսը սպիտակ,
Մերթ գու, ինչպես նիզակի սուր շաշուն՝
Պրկված ընդդեմ դեղին վիշապների—

Հնչեցիր Հնդկական մեծ գետերի ափին,
Անտառներում և եղեգնուտներում,
Եգիպտական հսկա և ժայռակոփ
Բուրդերի տակ,
Որտեղ շատաշո՛ւմ էր ահեղ
Ստրկության խարազանը օ՛ձ...

Հնչեցիր դու Հելլեն հումկու ուղմիկների,
Ծերմակադղեստ թուրմերի
Եվ ձկնորսների մոտ խոնարհ.
Քո հմայքո՛վ,
Քո շնչո՛վ,
Քո՛ թովչությամբ էր լցված
Հոմերո՛ւ պոնձյա առդանցքներով,
Եվ ոսկեբառ Սաֆոն,
Որ քնքուշ էր, ինչպես մանուշա՛կը:

Հառ-Ձկ-ից մինչև Հոմեր՝
Դու բարձրացար կոփված,
Որպես աշխատանքի՛.
Սիրո՛ւ,
Օրորոցի՛,
Ռազմի դա՛շն հնչյուն...

Դու դորավի՞դ եղար
Հանճարիդ ուղմավար Հաննիրալին,
Գրակթոսներին և Սպարտակին,
Որոնք բազմություններ էին մղում
Ըմբոստության և հաղթանակի:
Օ՛, գուցե Սցիպիոն Աֆրիկացին՝
Կարթագենը հերկեց բո հնչյունների՛ տակ...

Դու հնչեցիր ընչաբաղց Հոովմի փողոցներում,
Հրապարակներում և կրկեսներում,

Մերթ արնագույն, ինչպես Արեան արյունալատ,
Մերթ՝ որպես Վիրգիլիո՛ւսը ռազմաշունչ,
Մերթ՝ որպես իմաստուն Լուկրեցիոս Կար,
Մերթ Ամուրի թևերով իջար թևթևորեն
Նոճեորված աղջիկների հարսանյաց հանդեսին:

Մինչդեռ Արեկերում

Դու հնչեցիր որպես ռորույի և դադել,

Եվ շաշիրները, սափորները իրենց

Մխրճելով կենաց աղբյուրի մեջ՝

Իմաստնացա՛ն.

Դու կոփեցիր հրահանճար Ֆիրդուսին

Եվ կյանքի ու մահվան դադանի՛րը վերժանող-

Օմար Խալլամը գրինսեր

Ահալասիկ կանգնում են իմ ոգու աչքերի,

Իմ աչքերի տուաջ—

Թուլչական մեր Գողթան գուսանները,

Մինչկինդերները ծանրաբարո,

Եվ տրուբադուրները, առկախ բնարներով,

Անցնում են շահաստաններով Եվրոպայի...

Եվ, ինչպես տխրամած, հավերժալաց ուռի՝

Մորմորում են «անտունի»-ները հայկական:

Օ՛, և՛րդ.

Դո՛ւ ես, դո՛ւ սփոփը մենավոր ասպետի,

Թափառի՛կ ասպետի,

Որ լքելով ավատական պալատն անձուկ՝

Գնում էր մեռնելու սիրած կնոջ

Համր պատերի տակ:

Դու մարդկային եղար,

Մի՛շտ մարդկային.

Քո հեքո՛վ,

Քո հանգո՛վ,

Միջնադարյան մուսլամութ խավարից՝

Հրապույնի նման՝ կլավ Դանթեն,

Լուսավորելու ժամահակի կյանքը,

Թանձր,

Քառուային,

Ինչպես բիրլիական դժոխքը պժղալի...

Օ՛, Ե՛րդ.

Օ՛, դու կյանքի մշտագոյ ուղեկից,
Որ ծնվում ես ջանքի,
Արցունքի և ժպտի մեջ.
Բարձրանում ես կյանքի խառնարանից,
Ինչպէս մարդարիտը, որ ելնում է
Պատյանից իր վաղնչական:

Ժողովուրդներն ահա
Ընթանում են դարերի կոշկոռներով.
Ասկեռ միջնադարը սուղվում է անցյալում:
Եվ նոր դարի սարից՝
Բարձրանում են Շեքսպիրն ու Սերվանտեսը՝
Եվ աղվեսակերպ Ալբիոնը՝
Երգի ուղեկցութեամբ՝ աշխարհներ է գերում՝
Հասնելով Կոլումբի աշխարհամասն անգամ:

Եվ դու փոխո՛ւմ ես ընդ,
Փոխում բնույթը բո,
Գուցնը բո՛ւ
Եվ դա՛շնը բո,
Քարի և Բրոնզի դարերի դեմ՝
Կոփելով Երկաթի գալը բո...

Եվ այն ժամանակ, երբ կյանքի շվայտ
Ջավակը ընդվզեց հանուն իրավունքի,
Դու բարձրացար ամբիոն,
Որպես խորհրդանիշ ազատութեան.
Բայց և, ավա՛ղ,
Ընկա՛ր գիւլիտիների դանակի տակ...

Սակայն դու շմեռա՛ր,
Շմեռա՛ր դու, բանդի լի մահանում կյանքը,
Որ ծնում է ընդ,
Օ՛, Ե՛րգ...
Դու շմեռա՛ր,
Օ՛, ո՛ւր—

Այստեղ՝ խուլ և անձուկ վայմարի մեջ
Քնարում էր աննզդական Գլոբինե
Այստեղ՝ բարձրանում էր կրակասիրտ

Սայաթ-Նովան...

Դու հնչեցիր զարծյալ, գուցե ավելի՛ կուտ,
Քնարի լարերի և սրտի վրա,
Ավելի՛ հոգեին,
Մինչև այն երջանիկ պատմաժամը՝
Երբ տրոհվեց աշխարհն երկու բանականների,
Երբ հայտնվեց կորովաշունչ
Մարքսը մեր հանճարեղ...

Եվ դուրս գալով կյանքի անձուկ շրջանակից՝
Դու որոտացի՛ր լալն,
Դու որոտացի՛ր խիստ,—
Ֆարրիկներում և գործարանների մառ
Մթնոլորտում դժնիւ—
Նա՛, կապտաբաճկոն բանվո՛րը կռեց ընդ,
Եվ կոփվեց թեզ հետ—նա՛,
Եվ քո քնդյուններից սարսափեցին վախկոտ
Վերջին արքաներն ու իշխանիկներն այնժամ...

Եվ դու վրե՛ժ եղար,
Եղար սիրերդ,
Եվ ողորմ ե՛րգ եղար, և ըմբոստություն ե՛րգ,
Եվ դու մահե՛րգ եղար,—
Սառն ու անկիրք բոլոր մազնատների,
Բանկիրների, որոնք արյան ջրվիժի մեջ
Կյանում էին կյանքն ամբողջությամբ...

Օ՛, ե՛րգ.

Քոսներորդ դարի այգարացին՝
Դու ա՛յլ շատաշյուռով շատաչեցիր.—
Պիտե՞րում դու եղար հրային ուրազան,
Գորկիական մրրկահա՛վ եղար դու,
Շաշեցիր ոռոսական ստեպներում,
Որպես հավերժական կապանքները քանդած
Կյանքի ե՛րգ, և ե՛րգ ազատություն...

Այստեղից է սկիզբ առնում կյանքը մեր նոր,
Եր մեզ արշալուսած՝ արշալուսե պիտի
Տիեզերքը համայն.
Աշխարհը պայծառի ե՛րգն է երգում այս վեհ՝
Որ կոփեց մեծ Հե՛նիկը և Ստալի՛նը մեծ...

Եվ այժմ դու նորից
 Հնչում ես հաղթական՝
 Փառք քեզ,
 Օ՛հ, ե՛րգ,
 Սովետական երգ.
 Դու հնչում ես երկրի եռուն քաղաքներում,
 Եվ գյուղերում մեր ժիր.
 Մտնում ես գործաշան և ֆաբրիկա,
 Անցնում մեր դաշտերով ձիձղուն ու բարերեր,
 Մալարվում ես մեր լայն փողոցներով,
 Կանգնում կանգուն կիռակների մոտ,
 Միծաղում ես կինո թատրոնների առաջ,
 Եվ ուղիույի թևերով աշխարհասփյուռ՝
 Որպես ջանք ու պատիվ,
 Որպես սեր ու սխրություն,
 Երկաթաբա՛լլ զոհդարով՝
 Կյանքի հետ՝ գնում ես զեպի մե՛ծ Ապագան...

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

Հաղթանակի օ՛րն է։—

Արևհանդերձ հազիր, սի՛րտ իմ,
Ցնծա՛,
Ցնծա՛, ինչպես մայրական կարոտ աչքը,
Որ, հուսարի, երկա՛ր սպասել է կորած որդուն.
Ինչպես անտառը անհուն անձրևից հետո,
Ինչպես առաջին արևագալը Արարատի
Ձյունաշուք գլխի վրա,
Արևագալ՝ որ հողեհվելով՝
Լցնում է դաշտն անեղրական
Եվ սի՛րտը Մարգու,
Որ հաղթանակն այս կոփեց։

Հաղթանակի օ՛րն է։—

Սի՛րտ իմ,
Զա՛րկ բո բոլոր աշծաթյա ծնծղաները.
Եվ պղնձալար քնարը բո,
Որ արյան և մաքսոռմի այն օրերին
Ընթացավ բոցերի շավիղներով՝
Նշմարելով հաղթանակի պողոտան—
Զգված Կարմիր Մոսկվայից
Մինչև դարչնագույն Բեռլինը
Եվ դեզին աչք—Տոկիոն։

Հաղթանակի օ՛րն է։—

Ցնծա՛ մեր կորովասիրտ մայրերի
Բոլո՛ր արցունքներով,
Եվ հարսների, և բույրերի, և եղբայրների

Եվ սպիտակ ծերերի հասաչներով,
Եվ ժողովրդիս խնդադին աղաղակներով,
Որ, ինչպես ծովի անդուսպ մակերթաց,
Արարատից մինչև անկոխ տալգանն՝ ըր Հայրենիքիս,
Վարարելով՝
Անցավ ափեղերբի մի ծագից ծագ...

Հաղթանակի օ՛րն է։—

Ահա՛ տրուտական քախջախաված համառությունը,
Եվ կռակությունը և զոռողությունը մոխրացած,
Թշվառ, ինչպես խարխուլ
Բանախնների խելակարույս փախուստը
Թոցավառ հարիզոններն իվար:
Ահա՛ դեզին ընչացրնիւրի ամբարտաւան
Վիշապը անբռնիտոց՝
Սովետական անհաղթ ժողովրդի
Հարձածներից ընկած:

Հաղթանակի օ՛րն է։—

Յնծա՛, մի՛րա խմ:
Զի մենք, և մարդկությունն ամբողջ
Զից հասակով՝ ելանք միջնադարյան
Դառնաշունչ խավարի մեջ սուզվելու վտանգից:
Եպիստական սարսափելի ստրկության խարաղանք
Ընկավ ամենամեծ ավաղակի ձեռքից,
Ինչպես օձը սատակ...
Ես տեսնում եմ ներկա և գալիք սերունդների
Երախտավոր զուգանքը՝ խոնարհ՝
Լենինի դամբանի առաջ,
Եվ մեծ Ստալինի հաղթանակող բազկի առաջ՝
Շառաչելով դեպի պայծառագույն Ապագան...

Հաղթանակի օ՛րն է։—

Ահա՛
Նորից զրնգում են մեր մուրճերը,
Բնդում են մերենաները հաղթանամար
Դորձարաններում վերանորոգ,

Եվ Մարտի կրունկներից ձերբազատված
Համայնական արտերում
Նորից մեր ջանքն ու բրտինքն են ծովացել
Ինչպես արև ու ծով,
Որ իրար հետ են,
Մշտագոյ, ինչպես կլանքի անատոր
Ջրով և արևով հաստված...

Հաղթանակի օ'րն է։—

Ստեղծագործ միտքը դարբնվում և դարբնում է Նորից,
Եվ երգեր են երկաթիվում,—
Երգեր՝ ուղմի և քաջության,
Երգեր՝ անհնարին հերոսության,
Երգեր՝ սիրո և սրտի,
Որոնց բաղչբ ծանրության տակ՝ դեռ շեփորում ենք մենք,
Մինչև արեգակվեն գալիք հանճարները,—
Մրկաշունչ Տոլստոյն ու էպիրական Հոմերը:

Հաղթանակի օ'րն է։—

Յնծում է աշխարհը։—
Արարատից մինչև Կոնգո և Սինգափուր,
Ալլահալայից մինչև Երկիրն Հրու
Եվ մայր Մոսկվայում:
Ստալինգրադի դուրացական մարտիկները,
Ի ցույց հաղթանակի՝
Կթնոյան հրապարակով
Անցնում են սյուն առ սյուն,
Կոփված և չրդեղված ստալինյան դաշի
Ժամանակով,
Ստալինյան կամբով,
Հեքով,
Երգով:

Արեահանդերձ հաղիր, սի'րա իմ,
Յնծա',
Հաղթանակի օ'րն է։—



ԳՅՈՒՂՆ ԻՄ ՈՍԿԵՎՍԿԱ





UNIVERSITY OF
CHICAGO



ՀԻՆԳ ՄԱՏՆԵՐԻ ՊԵՍ

Մեր գյուղն եղևում է
Առաւոտ ծեղին,
Ցանում է արտը,
Քաղում է այդին,—
— Հինգ մատների պէս:

Միասիրտ գնում
Դեպի հանդը հաշտ,
Միակամ նետւում
Դեպի ռազմադաշտ,—
— Հինգ մատների պէս:

Եւ լատակում է
Սուրբ հացն ու գինին,
Նստում Հայրենի
Շենչող սեղանին,—
— Հինգ մատների պէս:

Կ Ա Լ Ե Ր

Սև գետնի վրա լրիվ լուսինն՝
Արեգակն՝ և քոցով բռնկած.
— Օ՛, համայնական արծաթե կալեր,
Օ՛, կալեր՝ արև ու ոսկի հագած:

Անընդհատ դարձող կամերի ներքո
խո՛ւլ շափշափում են խուրձեղը փերթ-փերթ,
եվ հաղթ եզները, արծաթ շողիբով,
Դառնում են ճարտար ճիպոտների հետ:

Դառնում են կամերն անվե՛ջ, անդադա՛ր,
Ռրոնց լծված են եզներ փորձառու.
Եվ ահա մի կամ, երկու խենթ արջառ
Վալից հանելով՝ փախչում են հետու

Մինչ անայլայլ են կալվորները ծեր,
Աղջիկներն առույգ և տարեց կանայք.
Պատանիները՝ խրտնած արջաւներն
Առնում են մասրի ճիպոտների տակ:

Եվ պահ մի՞ նորից ներդաշնակորեն
Դառնում են անվերջ կալի մեջ հսկա.
Հատակին թողած ոսկեհատ ցորեն,
Երեսին՝ փափուկ հարդը լուսընկա:

Այստեղ մի մեծ խումբ ժիր ու ժրաջան
Արագ շրջում է երեսը կալի.
Դալիս են բարձած սալեր ճոնչան՝
Բերելով դեզեր ոսկու և լալի:

Այնտեղ՝ վիթխարի դեզերի գլխին
Նստածանիներն՝ արծաթ կայծակնե՛ր,
Փայլատակում են կրկին ու կրկին
Ու դեզերն անվերջ բարձրացնում են վեր:

Յոգում սողում է մղեղը արծաթ՝
Նստելով կալին, ոսկի դեզերին,
Կանանց մազերի փնջերին հանդարտ
Եվ տղամարդկանց բեկս ու հոներին:

Հետո իջնում է խաղաղ իրիկուն,
Գնում են մարդիկ մի սի՛րտ, միասն՛րտ,
Ապա ելնում է լուսինը արթուն՝
Հսկում կալերի պահակների հետ:

Հ Ա Ս Կ Ե Ր

Անծայր արտերի հասկե՛ր իմ դեղձան,
Ցնծում եք նորից դուք ալեծածան:

Ձեր ծուփը նույն է և օրորը հին,—
Ինչ որ լսել է այս թուխ պատանին:

Եվ ոսկեդեղին այս ծովերը ձեր՝
Հավիտյան նոր են ու հավիտյան ծերո—

Եվ նույն է հողը—կարճըր և անխախտ,
Րայց այսօր ունեք դուք մի ուրի՛շ բախտ.—

Ա՛յն՝ որ համայնքով ծլում եք արտում
Եվ համայնքո՛ւլ էլ վերադառնում տուն:

Ե Ր Ե Ք Ն Ո Ւ Կ

Ես գիտեմ, կգաս մի օր,
Իմ կորած հեռուն.
Երբ գարունը բացվի նոր
Եվ զնգա առուն:

Կգաս, կնստենք թավիշ
Կանաչին տամուկ,
Կպարզենք իրար անվիշտ՝
Բախտի Երեքնուկ:

Կնայեմ աչքերիդ ես
Կարտուկ վարար.
Երեքնուկը կասի մեզ,—
— Սիրո՞ւմ եք իրար:

Ես գիտեմ, կգաս մի օր,
Իմ կորած հեռուն.
Երբ գարունը բացվի նոր
Եվ զնգա առուն:

ԿՈՇԻ ԲԱՐԴԻՆԵՐԸ

Կարոտով եմ հիշում ձեզ, Կոշի սաղա'ֆ բարդիներ,
Կոշի սաղա'ֆ բարդիներ, դուք, սառսուտներ մայր հողի.
Շատրվաններ, ռեղաձիգ—ձգված կապույտ օդն իվեր,
Երազացած սպասում—վերադարձին հաղթողի:

Եվ ահա նա', հաղթո'ղը, որ անցել է, անվնձեր,
Կոշկոտներով, փշերով, տատասկալից մի ուղի.
Դափնիներով պսակված իր բաշտվյալ մանրեր,
Պր գուանվում է արդեն հերիաթի մեջ ու տաղի:

Կոշի սաղա'ֆ բարդիներ, կանգնած խումբ խումբ, շաբեշար,
Ողջունեցե՛ք դուք սրտանց վերադարձող զինվորին,
Որ, երեկ ձեր բնի տակ, երազող էր սի'ահար:

Ողջունեցե՛ք տուն դարձող հայրենական հերոսին,
Ֆա', որ կովեց իսեր ձե'դ, նա, որ հաղթեց իսեր ձե'ր,
Որ դուք կ'անդո՛ւն մնաք միշտ, Կոշի սաղա'ֆ բարդիներ:

Ա Շ Տ Ա Ր Ա Կ

Արդո՞ր պիտի հանդիպե՞մ Պոռչյանին ես այստեղ,
Շահագրգիռ կամ դուցե, հանկարծակի, հրաշքով...
Օ՛, ո՛չ—Անցի՛ր հնօրյա այս փողոցը ծուռ ու նեղ,
Ահա ասֆալտ խճուղին—լցված դաշիս մեծ երգով:

Իմ հայրենի՛ Աշտարակ, աշտարակի պես շքեղ
Զգված մեր հին պատմության երկինքն իվեր՝ խոյանքով:
Սահայն ալսօր նորացա՛ծ, ինչպես փյունիկ հրազեղ,
Դեպի գալիքն ես նայում նո՛ր աչքով ու նո՛ր կյանքով:

Սրտիս ձեռքը պարզած քեզ՝ թող բարձրացնեմ բաժական իմ,
Խմեմ կենա՛ցը բո հին որդիների մեծանուն,
Որդիների՛դ նորօրյա, և սիրտըս տամ բո գինուն—

Ինչպես շոգն ու խաղողը՝ մնամ քեզ մի՛շտ մտերիմ,
Կրեմ կարոտ աչքերով գեղեցկությունըդ կրակ,
Իմ սիրելի՛, սիրելի՛, իմ սիրելի՛ Աշտարակ—

ԱՐԵՎԻ ԴՈՒՍՏՐԸ

Դու հիշո՞ւմ ես, Նազենի՛կ, և կարո՞ղ ես չհիշիլ,
Այն երեկո՞ն, ամպե՛րը, այն վերջալույսը կիշում.
Հորիզոնից հորիզոն ոսկի հեղեղ էր հոսում,
Շուտով ավտի ծաղկեր մի աստղանիւար խո՞ր գիշեր:

Այգիները զմրուխտով լայն հողն էին թավիշել,
Խոսում էինք ու գնում այդ թավիշով քաղցր-անուն:
— Նազենի՛կ, դու տեսնո՞ւմ ես այն ողկույղը հրաշեկ,
Եվ գիտե՞ս, որ խաղողին արևի դուստր են ասում:

Քո թուխ դեմքին սառեց մի վայրկենական նուրբ դարմանք.
Հետո փոխվեց ջերմությամբ ծաղկող ժպտի մի խաշաղ,
Արե՛—ժպտո՛ւ պահված միշտ իմ հուշերի ա՛մպի տակ:

Դու հիշո՞ւմ ես, Նազենի՛կ, այդ բոլորը երևի—
Հիշո՞ւմ ես՝ ինձ ասացիր, այնքան խրոխտ և ուրախ,—
— Իսկ ե՛ս—դո՞ւստրըն եմ հզոր ստալինյան արևի:

ՀԱՅՐԵՆԻ ՍԵՂԱՆ

Կանգնեց Մասիսը՝ լեւների թամադան,
Ոսկեթափակ արեն առած ձեռքի մեջ.
— Բարձրացրե՛ք լի ռաժականոր բերկրության,
Ահա՛ սեղանն ու իր բարիքը անվերջ:

Յնծաց արի Արարատյան՝ դաշտը պերճ,
Յնծաց սեղանն անհատենի լիության.
Դեպի հնձանն հոսեց խաղողը շեղջ-շեղջ,
Մովածավալ հացն ու գինին առնության:

Օ՛, բարերիր հայրենի դաշտ մշտական,
Դա՛ր ու դարեր մեր առաջ լի ու բացված,
Մի՛շտ բացելի՛ բանի հողին կյանքը կա:

Ժողովրդիս պես հյուրընկա՛լ, սրտաբա՛յ,
Թո՛ղ վարի բո բաժանելը բերկրության՝
Մեծ Մասիսը—հավերժական թամադան:

Փ Շ Ա Տ Ե Ն Ի

Արդյոք արեւի շողերը չե՞ն ջրնջ
Փշատենու մեջ թունդ բույրի փոխալած.
Տերեւներն արձաթ՝ դինդեր չե՞ն կոխւում
Այս ծառ-աղջըկա նուրբ ախանջներին:

Փշատենի՛դ իմ, ծա՛ռ, դու բուրախից,
Անտես արմունկով օդին ընկողմնած.
Միայն քեզ հետ է խոսքի բլունքւած
Սիրահար առուն՝ աշքերով աննինջ:

Արդյոք ծառերի բույրը չե՞ս կրտսեր,
Այդ քո սաղարթով համեստ, ամաչկոտ,
Փշատենի՛դ իմ, դու բուրժո՛ւնք, դու սե՛ր:

Ահա՛ դառնում են այգիներին հորդ
Իմ երկրի ձեռքե՛րը վարտակալոր,
Որ, բույրո՛ւղդ արբած, քե՛ւն մտնեն անդորր:

Ս Ի Ն Ո Ռ Ն Ե Ր

Ամեն անգամ, երբ անցնում եմ լայնածավալ
Մեր հանդերի սինոոներով, ամեն անգամ
Հիշում եմ այն ծեր գյուղացուն գետնաթափալ,
Պաղ աշրերն ու ճեղքած ճակատն աղյուծարամ...
Ամեն անգամ... Բովում է թե այն հարուստի
Բահն է իջել սրտիս վրա, իմ խղճի մեջ...
Դեռ լսում եմ սուր վեճերը ես վերստին
Եվ սինոոի շուրջը եղած պոխն անվերջ
Իշնող բահր... գյուղացու դիմ... ճակատեն՝ վերջ...
Թայց, սթափված, նայում եմ ալս սինոոներին,
Որոնց երևի իրար խառնեց հղոր մի ձևոր,
Մի բնդհանուր սինոո տալով մեր հանդերին.
Եվ ցնծում եմ ամեն անգամ ես նորից նույ,
Ճնծում եմ, որ հիմա չկա ո՛չ մի սինոո...

Ա Ն Ձ Ր Ե Վ

Աման տոթը իր շիկացած ձեռքերով
Այգիների կոկորդնեոն է սեղմում խիստ.
Բայց տոթի գեմ, ահա', որպես խոլ գրոհ,
Խտանում են գորշ ամպերը բարձրանիստ:

Այնքա՛ն նման դեղաննեոի առաջին,
Տերեւների ծոծրակների վրա լուռ,
Հանկարծ ընկնում են կաթիլներ նոր ու ջինջ,
Ծնելով մի անուշ գրգիռ ու սարսուռ:

Քարացած օդը ճարում է կարծես թե,
Քնչպես երկար անջողի հողը աղի.
Եվ շողում են ջրի շյուղերն արծաթե,
Հետզհետե հորդանալով կատաշի:

Ծառը ծառին, մեղմ գովի մեջ կենսաթով,
Ողջունում է թմրությունից արթնացած.
Եվ ճլուղից ճյուղ, զվարթացած սաղարթով,
Ուրախության արցունքներ են հոսում ցած:

Այգիները լվանում են հապշտապ
Փռչում կորած զմրութիւտ վարսերը իրենց.
Եվ ծծում է աղահոսթյամբ հողը տապ
Իրեն հասած կաթիլները փոքր ու մեծ:

Թվում է թե, լայնության մեջ արդեն թաց,
Եվ ջրածիզ խորության մեջ, պտտելով,
Խշում է մի հսկայական ջրապագ՝
Ջրի փոշին դեպի ներքև հողվելով:

Մինչդեռ զաշտում և տների ծածկի տակ
Մարդիկ խնդում են միաջա՛ն, առնացի՛,
Քանզի ամե՛ն մի կաթիլի մեջ նրանք
Ելքն են տեսնում ծո՛ւղ դինու և ծո՛ւղ հացի:

Ա Շ Ո Ւ Ն Ը

Աշունը բացել ոսկի դռները
Եվ լիություն է բաշխում անսպառ,
Քաղցրացել են շեկ ամեն ծիլ ու ծառ,
Հասուն՝ ժպտում են պուրպուր նուները:

Արբշիռ բուրմունքը այդին բունել է,
Մեղրաչուր, մարուր օդում արևսս՝
Շրշում են շուրջն ու տնդեր պայծառ,
— Որսկեսզի ծլենք՝ պն՝տը է մեռնելը:

Սիրելի՛ աշուն, ոսկեհյուս պսակ՝
Պատանի զարնան և այր ամառ-իս,
Աշո՛ւն, բնության բառաստղամայակ:

Քաղցվել է թո ճոխ հանդեսը, ահա՛,
Եվ ձմեռը, հին ավանդին հյու,
Ելնում է ափրիոն՝ նախագահելու:

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Ո՛վ է հյուսել հերիաթն այս հին.

Ո՛ր հանճարը անանուն.

Բն մեկն, իրըր, վարի ժամին՝

Ոսկու կարաս է հանում:

Ո՛վ մարդկային մանուկ մտքի

Այրող իղձ ու վառ երազ.

Ծնված բովում սուր կարիքի

Եվ կարուտի մեջ անհաս:

Եվ խոր տենչով՝ անշո՛ւռ, անվե՛րջ.

Հողավարը, ամենուր,

Պահել է այդ հույսը անշեջ,

Մաճը՝ բանուկ, խոփը՝ սուր:

Բայց ե՛րբ, ո՞րտեղ, ո՞րը արդյոք

Հանեց կարասն ոսկելից...

Մարդը մնաց նորից անօդ,

Երազն՝ երազ, իղձը՝ իղձ:—

Օ՛, հանճարեղ հերիաթասաց,—

Ձեռք անզո՛ր ու մեկավո՛ր.

Ոսկու կարա՛սըդ երազած՝

Մենք հանում ենք ամե՛ն օր...

ԳՅՈՒՂԻ ԳԻՇՆԵՐԸ

Արեն իջնում է սարից ցած, սակայն տոթը, թոնոն պէս տաք,
Համառում է դեռ օդի մէջ—ցերեկային այրող հրով:
Բարկ բութում է փշատենին, իսկ բարդին ձիւ ու սպիտակ՝
Կարծես հալվել ու սառել է զմրութեամբ իւր մամիկներով:

Հո՛ւն հատում է մթնշաղը, իր պաղ վարսերը քանդելով,
Այգիներին ու արտերին առած փափուկ թափիչի տակ:
Ու դառնում են մարդիկ խումբ-խումբ, խճանկար ճանապարհով,
Այգիները ժապավենող ուղիներով նկղ ու յառակ:

Ծանրը ելնում է լուսնյակի բոլորակը թխամոր պէս,
Շուրջ բոլորը առած ա՛ստղ ճերմակ ճուտեր միջիտնալոր,
Ծղրիգներն ու դարտերն անվէրջ բոցում են մի երգահանգիս:

Ու խորացող գիշերվա մէջ՝ գլուղն է սուղվում վաստակավոր
Մինչդեռ սգի՛ն աշխատանքի, հսկող մոր պէս անցնում անվերջ,
Վաղվա եռա՛նդ ու կտրո՛ւլ է արթուն պահում ամենքի մէջ—

Հ Ե Ղ Ի

Մի փունջ հեղի, կես կանաչ, որի քիստերը բարակ
 Ճառագայթներ են կարծես, ճառագայթներ բոցկտումն:
 Մի նոր հեղի, թա՛րժ հեղի, հի՛ն օրերի հիշատակ,
 Կապում էի, երբ փոքրիկ հոտաղ էի ևս դաշտում:

Քայց հին հեղին ուրի՛շ էր, հին հեղին այն ժամանակ
 Քաղում էինք մի արաից, որ ունէր մի տեր ու տուն.
 Ա՛յլ է հիմա այս հեղին, որպէս նիշ ու նշանակ,
 Համայնագործ մեր դյուղի, հանրապատկան մեր հանդում:

Ա՛յս նոր հեղին նշան է անբակտի միացման,—
 Այն՝ որ դարեր ու դարեր տենշ ու Երազն էր երկրիս,
 Այն՝ որ ունենք ի դեմ մեր տառապանքի հատուցման:

Այս փունջ հեղին, թա՛րժ ու նոր, այս փունջ հեղին, սիրելի՛ս,
 Կաթիլն է այն ծով հացի, ալիքները որի նոր՝
 Այլ մի մրրիկ իրարից չի՛ բաժանի ոչ մի օր:

Զ Ա Ր Թ Ո Ն Ք

Վերը՝ երկինք լուսաշող,
Վարը՝ կանաչ, շաղ ու ցող:

Մարլող աստղեր կամարում,
Հովը թուփն է համբուրում:

Թառում է հավըր ծառին,
Առաջին շողը՝ սարին:

Առաջին շողըր հորդում
Ոսկում է բարձր բարդուն:

Նանը կապում է գոտին,
Հարսը վազում կովկիթին:

Հեղում հաշում է մի շուն,
Նախիր՝ փոշու մշուշում:

Նման մեղվի փեթակի՝
Դյուղն աղմկում է ոտքի:

Լ Ի Ա Լ Ո Ի Ս Ի Ն

Ինչպես պապիկի դեմքը փառահեղ,
Բարի պապիկի դեմքը լուսավոր,
Սարից՝ լուսինը բարձրանում է վեր,
Թուռնիկ-ապտղերը առած շուրջ բոլոր։

Դեմքս Մասիսն է, հավերժո՛ւղը, նա՛,
Որ կարծես անվերջ մեխվում է լուսեղ
Այս գիշերի մեջ աստեղահամ
Ազամանդափայլ թագովն իր բյուրեղ։

Մինչ Մասսի ներքո—Արարատյան մեծ
Եվ խորունկ դաշտն է դեռ շոգով լցված.
Սուզված զմրուխտի ծառատանի մեջ,
Շնչում պաղ օդը գիշերադնաց։

Վերջին ձայները լուռ է գյուղում
Զիգ բարդիների մեղմ ցոսափի տակ,
Եվ աղբյուրն, ինչպես մշտահոգ զկղում,
Լցվում է քարե գուռի մեջ հստակ։

Մոտից լսվում է դեռ չչորացած
Ճահճի գորտերի համերգը երկար.
Պատի ճեղքերում անտես թաքնված
Ճռիկը նինջն է օրրում միալար։

Շուրջն համատարած լիալուսնի մեջ
Ննջում է խաղաղ ու խորին բնով.
Սիրտըս ծփում է խնդույթյամբ անշեջ՝
Լեցված նո՛ր գյուղի նո՛ր խնդույթյանով։

Իմ նո՛ր գյուղի որ, ջանասեր ու քաջ,
Գնում է կյանքով իր համայնական,
Լիալուսնի մեջ, աշխարհի առաջ,
Դեպի քաղա՛քը—դեպի ապագա՛ն։

ԱՐՏԻ ԴԻՄԱՅ

«Պապի, դու գիտե՞ս, ինչ է էս արտը...»

Զորս տարեկան Վաշեի հարյուրամերից,

— Պապի, ո՞ւմն է էս արտը:—

— Բոլորիս է էս արտը:

Հենց որ գարունը բացվեց,

Գեղ գեղովի, փոքր ու մեծ,

Աշխատանքի ելանք մեկ,

Արտն հերկեցինք ծեգից ծեգ.

Սերմ ցանեցինք աստղից շատ,

Սերմ՝ սպիտակ, ոսկեհատ.

Հիմի սրսուռ ու սերսուռ

Ցորենի ենք սպասում:

Արտը՝ բոլոր-բոլորին,

Շատ ցորեն—շատ աշխօրին:

Պուճո՛ւր, երբ որ մեծանաս՝

Պապիցըդ լավ կիմանաս,

— Բոլորի՛ս է էս հանդը,—

էս ալգին ու էս արտը:

Ա Ռ ՈՒ Ն Ե Ր

է՛ր, առունե՛ր, առունե՛ր, անվե՛րջ հոսող առունե՛ր,
Առուներ, որ գալիս եք ու գնում եք հեռուներս

Զվարթ, զնդուն մանկանց պես, սրտերով ձեր տրոփում,
Ձեր կարոտ մայր ծովերի բաց գրկին եք շտապում

Ձեր մեջն է միշտ արտասվում ուռենին՝ կույսը տխուր,
Ու հառաչում,—առունե՛ր, ո՞ւր եք գնում դուք, ա՛խ, ո՞ւր

Իսկ դուք անխույժ ցնծում եք—ուղիներով ձեր երկար,
Մերթ տանելով տերևներ ու փշատներ բամահարս

Սանրիով հեղ մամուռի կանաչ վարսերը բեհեղ՝
Աչքով-ունգով եք անում բարձր բարդուն սիրակեղ

է՛ր, առունե՛ր, առունե՛ր, երակներ դուք մայր հողի,
Ձեր ջրով են բրդանում ողկույզները խաղողի

Ձեր ջրով են բարձրանում—հասկ ու ծաղիկ, ծիլ ու ծառ,
Տոթի մեջ՝ ա՛յն ժպիտն եք, որ ցոլցւում է պայծառ

Քաղցր է նայել ձեր ջրին, ձեր երթին ժիր ու փալուծ,
Եվ մանկությանը տեսնել ձեր արծաթյա հայելում—

է՛ր, առունե՛ր, առունե՛ր, անվե՛րջ հոսող առունե՛ր,
Առուներ, որ գալիս եք ու գնում եք հեռուներս

Ջ Մ Ե Ռ

Սիրում եմ քեզ, ձմե՛ռ, դու սպիտակ պսակ
Դրված մեր լեռների, մեր դաշտերի վրա.
Օ՛, դու երկրի կյանքի հասունության հասակ,
Եվ պապ՝ նորահրաշ ու դալարվող տարվա:

Արդեն ալիքված են դադաթները անհուն,
Եվ դաշտերի ափսեն արծնաթվիլ է արդեն,
Եվ գետերն են արդեն սառցե պատյաններում,
Եվ ծառերն են հադել բյուրեղիկներ կաթն:

Եվ ահա դու կանդնած,—հաղած ամպ ու մշուշ,—
Լքեմիտ, ինչպես ծերուկ նահապետը խաղաղ.
Եվ ահա սանձերը հողմերից խստաշունչ,
Եվ հողմերով կոփված սառցե սրերըդ պաղ:

Այստեղ քաղաքներն են—ձյուն ու մշուշի մեջ,
Այնտեղ ավաններն են և գյուղերն են մեր հոժ.
Այստեղ բարկ է նորից կյանքի կրակն անշնչ,
Այնտեղ, բուխարու շուրջ և՛ զրույց կա, և՛ բոց:—

Եվ հա՛ց կա, և գինի՛, և հեռավոր դարնան
Կանա՛շ, կանա՛շ երազ, և՛ երգ, և՛ խնդություն.
Եվ կյա՛նք հայրենական, և ջա՛նք հայրենական,
Որ զարդարում է արդ—ամեն պալատ ու տուն:

Սիրում եմ քեզ, ձմեռ, սիրում եմ քո փափուկ
Իջնող ձյո՛ւնը, ձյո՛ւնը, սառն աստղերի նման,
Սիրում եմ քո հողմը, որպես վայրի աղմուկ,
Տանիքների վրա ու դաշտում մանեման:

Եվ թո սառն արևը, որ մերթ ընդ մերթ հանկարծ
Ամպերի հովիտից նայում է սառն երկրին,
Եվ պարզկա օրըդ, արծաթ—ոսկի հագած,
Եվ պարզ գիշերըդ, որ կարկամում է լուին:

Քա՛ղցր է ըո ցրտի մեջ թայլել անվե՛րջ, անծա՛լր,
Անկոխ ուղիներով, ուր հողն է խոր լուռ.
Քո մշուշի միջով, որի թողլն անծալ
Ունի աննզդական ու երազկոտ հեռուն:

Քա՛ղցր է թայլել անվերջ, և ձեռքից ցրտության
Հանկարծ ընկնել մի գյուղ՝ ձյուն—ճամփներով ոլոր.
Եվ բաց տեսնել սեղանն անհուն առատության՝
Համայնական գյուղիս վայելքների բոլոր....

Կ Ա Ր Ո Տ

Մեր սունճ է, դեմք բարդին,
Բարդու տակ՝ զեղուն ատուն,
Ա՛խ, հիմա մայրս անդին
Մեր հին թոնիրն է վառում:

Մեր զովն է, սարից իջած,
Խաղում է մանր ու վնտվնտ
Սիրած աղջկա փնջած
Ճակատի խոպուպի հետ:

Մեր հանդն է էանաչ բեհեշ,
Ու ձայնի՝ հանդարտ, ծուխ-ծուխ,
Արևը անուշ մոտ պես
Գրվում է ամեն մի թուխ:

Մեր գյուղն է Աչքս փակած՝
Բացի ակնթարթում,
Լինելի հանկա՛րծ, հանկա՛րծ—
Մեր տան մե՛ջ, զովո՛ւմ, հանդո՛ւմ:

Գ Յ ՈՒՂԵՐ

Երեկ ձեր մութ աչքի առաջ
Հորիզոնը փակ էր ու կարճ.—
Բակից կալը և կալից արտ
Գնում էիր դուք անզվարթ,
Աչքը հառած երկինքն իվեր—
Դարե՞ր, դարե՞ր

Վառվում էին արտն ու այդին
Երաշտի մեջ սպառնադին,
Եվ կարկուտն էր զարկում զարհուր,
Եվ մորեխի արշավը կույր.
Ձեր ոտքի տակ, ձեր սիրտն իվեր—
Փարե՞ր, քարե՞ր

Մինչ ժամի մեջ, դուք գլխահակ
Կանդնած սառը կամարի տակ
Մրմունջ էիր լուռ արձակում,
Տրտունջ էիր սաղմոսերդում,
Մխում էին ձեր միտքն իվեր—
Բառե՞ր, բառե՞ր

Բայց չի եղել այս աշխարհում
Ո՛չ մի ձմեռ առանց դարուն,
Ամեն մի ցավ, ամեն մի վերք
Ունեն իրենց ելուտ ու ելք.—
Շողողացին ձևերիդ ձեր—
Սրե՞ր, սրե՞ր

Եվ ելաք դուք ծիր ու արի
Եեղդող մութից խրճիթների.
Եվ արտերին տվիք հիացք,

Շառաչեցին հազար ջրանցր,
Եվ բարձրացան պատերն իվեր—
Քարե՛ր, քարե՛ր,

Ու սիրով նոր ու բոցակեղ
Քաղաքը լույս առաքեց ձեզ,
Քաղաքը ձեզ առաքեց գիր,
Նոր գութան, նոր ճակատագիր,
Հորձանք տվեց ձեր բերքն իվեր—
Մոլե՛ր, ծովե՛ր,

Հիմա ձեր նոր մատների տակ
Կյանքը հստակ ու համարձակ
Ուրի՛շ երգ է երգում հզոր,
Եվ հասկերն ու ճյուղերն այսօր
Մատների տակ դարձել են ձեր—
Հարե՛ր, լարե՛ր,

Այն ինչ որ կա՝ ձերն է հավետ,
Իրար համար, իրարու հետ,
Եվ այս շենչող, եռուն ներկան,
Եվ լուսավոր մեծ ապագան
Ողջ՝ այն գալիք օրերին ձեր—
Դարե՛ր, դարե՛ր...

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Արարատյան դաշտն է, տե՛ս, լցված շողով արևի,
Որ նոր զարթնած՝ հեղեղվեց Մասսի դադաթից:
Առվի խոխոջն է լավում և շշուռնը տերևի,
Որոնք թմրել էին ծեր ձմեռան հեքիաթից:

Ելրտում է հողը թուխ, սերմը առած տաք ծոցում
Գուճ գոգի մեջ ակռսի՝ արտի աղաղան՝
Փայփայտում է ծիլերի դալիք զմրուխտը ցնծուն,
Որ վաղը շեկ հասկերով՝ հասուն պիտի գան:

Իրար ձուլված մեր հողի, հողի վրա հին ու նոր,
Իմ բազմավորձ պապերի որդիները՝ ժիր՝
Բարձրացրել են երկաթն նոր հորովել ու արդր՝
Արարատյան դաշտի մեջ—կանաչ ու կարմիր:

Եվ նայում եմ լուրթ հեղին, և լուրջ հողին եմ նայում:
Համայնաբաղ արտերին, ալդիներին վառ,
Եվ մարդկանց այս, որ ահա ցանցել են դաշտը անհուն՝
Վաստակելու իրար հետ—վաստակը վարար:

Այս մարդկանց, այս նո՛ր մարդկանց, որոնց նմանը չկա—
Մեր պատմության փոթորկոտ և ոչ մի դարում,
Որոնց թրծեց Ստալինյան անմար բոցը արևկա,
Որ գործերով միշտ անմահ մնան օրերում...:

Որ գյուղական խրճիթից և պալատից բաղաբի
Ծնվեն նոր-նոր հերոսներ՝ աշխատանքի մեջ՝
Եվ վառ պահեն ոգի մեր արարչության ու երգի,
Պահեն կյանքի ծառը թարմ, արևը անշեջ...:

Եվ տեսնում եմ, թե ինչպես թշնամութունն հինավուրց՝
Հաղարամյա ճիրանը րաշել է ընդմիջտ,
Իր հետ տանելով և՛ մութ, և՛ մտքի հանգույց,
Ն՛վ վերք, և՛ լաց, և՛ կական, տառապանք ու վիշտ:

Եվ տեսնում եմ, թե ինչպես իմ երկրի մարդը այսօր
Պողպատի պես փայլում է՝ սրբրված ժանդից,
Եվ շոգնած՝ կուտ է իր ներկան մեծ ու հզոր,
Որ գալիքը փրկելի ծանր տաժանքից:

Հաստատ, ինչպես այս հողը, հաստատ է մեր ապագան,
Մեծագործ է մեր ներկան,—հախուռն ու եռուն:
— Ողջո՛ւյն նրանց, որոնք վաղ՝ մեզանից դռհ՝ պիտի գան,
Եվ հրաշք կյանքը տանեն դարերի հեռուն:


...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...

...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...

...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...



ԱՄԵՐԻՈՒՅ ՀԵՏՈ





С. 100



ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՀԱՆՔԸ

Իմ հայրենիքը ահա՛, ինձ հետ է նա միշտ ու միշտ,
Ամեն, ամեն տեղ, որպես անհուն արև, բացված իմ
Ֆենեղրական ու կապույտ երկրների մեջ մտերիմ:

Իմ հայրենիքը կարմիր, երկառնորդ ու անվիշտ
Առօրյայով իր հախճառն, ու բախտովն իր անայլայլ
Իր ներկայով մեծագործ, իր դալիերով լուսավայլ:

Իմ հայրենիքը չքնաղ, հաղթանակող ու միշտ մեծ
Իր անցյալի փառքերով, ու փառքերով այսօրվա,
Մարտառած է դալիքի լեռներն իվեր բարձրաբերձ:

Իմ հայրենիքը հավերժ հաղթանակի ռազմիրա,
Եզրայրական դրոշով՝ դրոշների մեջ բաղձած,
Երկիր ու երդ կառուցող, պայքարի մեջ՝ դյուցազուն:

Իմ հայրենիքը ահա՛:

ԻՄ ԵՐԿՐԻ ԾԱՐԳԱՆՑ

Օրհնութիւն խոսքեր թող անգո՛րն ասի,
 Թող զհա՛տն ասի խոսքեր օրհնութիւն:
 Ես ձեզ չեմ օրհնում: Թ՛, այսօր քանզի
 Դուք ոգի սնեք արի անութիւն,
 Որ ահա՛, ահա՛ զըրնդում է հաղթ՝
 Արտերի անհուն շիկնած ծովերում,
 Այգիների մեջ զմթութեամբ աղաթ,
 Աղատ սարերի մարմանդ հնկերում,
 Քաղաքների մեջ—անվերջ կառուցող,
 Գործարանների կամարների բաւկ,
 Ճանապարհներին հեռն ու լապտեր,
 Մայրերի վրա—լայն ու սղիտակ,
 Ոգի՛, որ անցնում մի տնից թի տուն,
 Քաղաքից քաղաք, մի գետից մի գյուղ,
 Ոգի՛, եր կոփել ձեր հողին խնդուն,
 Ձեր սիրտը զկարթ, ձեր աչքն աներկյուղ,
 Եվ թրծել է ձեզ՝ բուրաշի կավի,
 Եվ երկաթի պես, որ մնաք ամուր,
 Պիրկ կանգներ ընդդէմ ազմի ու դավի՝
 Կոփեք հաղթանակն հանուր, ընդհանուր...

Այդ ոգի՛ն ահա զնդում է անվերջ
 Ո՛չ թե մի մարդու, այլ բոլորի՛ մեջ:

Ի Ն Չ ՈՒՔ...

Հաղթելուց հետո, ընկերներդ
մտանց հայրերը նկան, սիրելիս.
Մինչ դու նայում ես մորըդ աչքերին,—
— Իսկ իմ հայրիկը ինչո՞ւ չի գալիս:

Ինչո՞ւ... Եվ այդ ընդհանուր-ի պահին.
Մթնում է մայրըդ—աչնան պես ամպոտ.
Դու ընդհանրես ես հառում լուսնային,—
Ա՛խ, այնպե՛ս արդար, այնպե՛ս պահանջկոտ:

Քեզ մխիթարե՛լ... Անհնար է այդ.
Մխիթարանքը ծերերի՛ն է պետք,
Մայրերի՛ն է պետք, որոնց անդլարթ
Սրտերի մեջ կա և՛ կսկիծ, և՛ վերք:

Ինչքա՞ն երջանիկ կլինիր դու,
Եթե ընդհանրես էլ տուն վերադառնար.
Բայց ընկալ՛ ուղմում, կատաղի, հատու,
Ինչպե՛ս զինվորն է ընկնում քաջարար:

Քնկա՞վ... Իսկ մայրըդ, զսպելով վիշտն իր՝
Կուլ տվեց թաքուն արցունքներ աղի.
Մինչ դո՞ւ, անգիտակ, թու՛լում էիր,
Քո ուշքն ու միտքը նվիրած խաղի:

Եվ այսօր, արծվի՛կ, իմացիր մի բան,
Թե որ հայրերը շրջակային անվախ,
Որդիներն այնժամ կյանքում հավիտյան
Կկորցնեն և՛ սեր, և՛ ծիծաղ:

Եվ քանի՞ քանիսն, որոնք, հենց հիմա,
Ամեն ժամ, քեզ պես, իմ լա՛վ սիրելիս,
Նույն հարցն են տալիս կամա, ակամա.—
— Մեր հայրիկները ինչո՞ւ չեն գալիս...

Վ Ե Ր Ա Գ Ա Ր Ձ

Հեռո՛ւ, հեռո՛ւ գաշտերից ու լեռներից հեռավոր,
Մեկը, որին սեպեւ են անհայտ կւրած կամ ընկած,
Մեկը, որին կառչել է մայրը հույսո՛վ ամեն օր,
Ահա հանդով հայրենի վերադառնում է հանկարծ։—

Եվ ահա գյուղը ծանօթ, և ահա սարն Արաքած,
Դաշտը—զմրուխտ ու ոսկի—բարկ արևի տակ հզոր,
Եվ զանգրահեր այգիներ—, ողկույզներով բուրնկած,
Եվ հին տունն ու հին բակը—կարծես նոր են, կարծես նո՛ր։

Եվ հանկարծ մի աչքից աչք ու սրտից սիրտ, լիաթոր,
Դարձի համբավն է թնդում, և ամբողջ գյուղը նրա
Ոտքերի տակ փռում է խնդուխտներ՝ որպես գորգ։

Բայց ամենից ավելի այդ խնդուխտամբ հուրհրան՝
Մայրն է ապրում, քանզի նա, անհայտության խոր ծովից
Հույսի երկա՛ր ձեռքերով հանել է դանձր նորից։

Ս Պ Ի Ն Ե Ր

Վերքի խորո՛ւնկ սպիներ, մեծ ու փոքր սպիներ,
Մենակ ո՛չ թե մի մարդու, այլ միլիոնի սրտի մեջ.
Նայեցե՛ք այս մեծ սիրտը, ջահի նման բռնած վեր,
Սպիներ լեն, այլ կարծես խարույկների բորբ ու անշնչ

Մայրը որդուն հեկեկաց, հառաչեց հարսը անվերջ—
Քանի՞ նղրայր, ըանի՞ ըսյր ունեն վերքի սպիներ...
... Բայց դու, իմ նո՛ր ժողովուրդ, ապագայով բոցատենչ,
Լուսապայծառ ներկայով՝ շատաշում ես աներիս

Ու լքնայած բազում են սպիները ըո հոգու,
Սպիները ըո սրտի, բայց հաղթողիդ մոտ նրանք
Բռնկվել են որպես նիշ, որպես անթեք գրողակ:

Փա՛ռք քե՛զ, տոկո՛ւն ժողովուրդ, տոկունությանը ահարկու,
Պղնատակա՛ն ժողովուրդ, սկիզբըդ նոր պատմության,
Սպիներս՛վ ջահեցի՛ր ըո հաղթանակը տիտան:

Վ Ա Յ Ե Լ Ք

Ծրեկոյան մեղրամոմի
 Շողերը նուրբ ու լուսավիտ
 Խաղում են մեր դռան գեմի
 Կանաչ ծառի սաղարթի հետ,
 Այս, ինչպես մի ժամանակ քո
 Մատներն էին խաղում կրծքիս,
 Սրա նման մի երեկո,
 Բիլ երեկո, որ անկրկիծ
 Խո՛ր փովել էր զուլալ ու զով,
 Ու մենք տարված մեր առաջին
 Մարութ սիրո՛ւ երազներով՝
 Զէինք լսում մեր ականջին
 Հասնող ձայներն, ինչպես հիմա
 Վերջալուսի շողերը վառ
 Այս սաղարթի փնջի վրա,
 Որ անտարրեր ու զղևար,
 Դեռ խաղում են՝ աչիւրա՛ն նման
 Քո մատներին բարակ ու շող,
 Երբ զարկից ժա՛մը բաժանման,
 Բաժանման ժա՛մը սիրո՛ւ մաշող,
 Երբ երկինքը գարդարից իր
 Ճակատը բլուր աստղով արծաթ,
 Ես՝ մի աստղով մեծ ու կարմիր՝
 Ու մեկնեցի դեպի ճակատ...
 Ճակա՛տ, որի հուր ու ծխից
 Եկել եմ, որ զղամ կրկին
 Անհուն վայելքը հաղթողի,
 Եվ մատներդ իմ հոգնած կրծքին...



ԶԱՐՈՒԿՆԵՐ ԲԼԵՌԻԿ
(Ժողովրդական տարածք)



ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՅ

Ժողովրդական այս տաղերը պատկանում են նախառեղուցիոն շրջա-
նի բանավոր ստեղծագործություններին, որոնք հանդիսանում են իմ կող-
մից ժշակված տաղերի վերջին ցիկլը:





— Առուն կերթա, գետ կը թափվի,
Գետը կերթա, ծով կը թափվի.
Դուն էլ անուշ՝ ելեր կերթաս,
Զուլալըտը չա՛ր, որ զուլալ ես,
Ապա դուն ո՛ւր պիտի թափվես:

-- Առուն կերթա, գետ կը թափվի,
Գետը կերթա, ծով կը թափվի.
Ես է՛ն գիտեմ, որ կը թափվեմ
Ցերեկն ի բուն, գիշերն ի ժեշ,
Իմ ծո՛վսիրտ չա՛ր, քո սրտի ժեշ:



Մենակ ես չեմ,
Որ քեզ համար կը հառաչեմ:

Էն որ մարդից շունչ կելնի վեր,
Էն որ հովից հունչ կելնի վեր,
Էն որ ատուն կուլա երեր,
Էն որ թռչուն կուլա կերկեր,
Էն որ կրակ՝ ծուխ կելնի վեր,
Էն որ ճրագ՝ մուխ կելնի վեր,
Էս ամենը, ասա՛ ինչ են,
Էս ամենը,
Յա՛ր, քեզ համա՛ր կը հառաչեն:



Օրոցք զարկիմ զարի գլխին,
Հարավ քամին տանի, բերե,
Սարի այժ գա, ծիծ տա տղիս,
Անուշ ծիծ տա, մածուն մերեւ
 Օրո՛ր, օրո՛ր, անո՛ւշ տղա,
 Նոան հատիկ ու նո՛ւշ տղա:

Հով օրոցքը՝ ճյուղ ու տերեւ,
Քնի, ելնի հորով-մորով,
Գլխին բաղված կանաչ արեւ,
Սևղան նստի յոթ եղբայրով:
 Օրո՛ր, օրո՛ր, սիրո՛ւն տղա,
 Մեր տան կամար ու սյո՛ւն տղա:

Տղես ապրի հաշար տարի,
Մնա սրտիկը արևով,
Չհանդիպի ոտքը քաշի,
Մաւ մնա կանաչ տեղուով:
 Օրո՛ր, օրո՛ր, իմ քաջ տղա,
 Աշխարհով մեկ ճանա՛չ տղա:



Կը խոսեին
Նրկու ժիտիկ,
Թէն թէին,
Իրար մոտիկ:

— Ո՛չ հրանի
Անսեր մարդուն,
Ո՛չ կյանք ունի,
Ո՛չ տեղ ու տուն:

Էն կը միտ,
Միտքը մոլոր,
Էն կը ծիտ
Տարին բոլոր...:

Ասին, ասին,
Իրար առան,
Թէին տվին,
Ուրախ թռան:



Ա՛յ իմ սիրուն ու մանր,
Մանր, ոսկու պես ծանր,
Էն սիրտ մաշողը գիտի,
Մանրդ քաշողը գիտի,
Որ դու սիրուն ու մանր ես,
Մանր ես, ոսկու պես ծա՛նր ես



— Լուսին, իմ հովան լուսին,
Ուր կեցեալս, ծովան լուսին:
— Կերթամ վեր Մովսսարին:
— Կերթաս վեր Մովսսարին:
Բարև տար բերախո յարին.
Իմ յարն Լնտեղ բնած է,
Քնած է, քրտընած է,
Պաշած է, կարմրած է,
Սիրած է, զարդարված է,
Ինձանից խոռված է.
Կերթաս վեր Մովսսարին:
Բարև տար բերախո յարին:



Մովա՛նք տղա՛ ու խորո՛տ,
Դիշերից մինչ առավոտ
Տամբուրիդ ձենք՝ կուգար,
Քո տամբուրի թելերից հղան
Թե՛լ մի կտրավ, ընկավ վար
Հիմի՛ դու ի՞նչ կանես ինձ,
Էն կտրած թելը գտել՝
Կաշակիս ճոթն եմ գրել,
Դռշակիս ծալն եմ գրել,
Սրտիկիս մոտն եմ գրել,
Թե սիրտ ունես, գաս գտնես՝
Հալալ կանես պաշտ՝ բեզ:



Արի՛ երթանք Մովսսար,
վեր, էն ամպին հավասար.
Փունջ կապենք բարի լուսին,
Սարի սեր սիրուն Սոսին:—
Ա՛յ Սոսին, սարի՛ ծաղիկ,
Սարի սեր, լարի՛ ծաղիկ:

Ով անցնի էնոր մոտով՝
կը հարբի անուշ հոտով,
Մաղիկ չէ՛, ծաղկի գինի,
Հարբողին մահ չի լինի:—
Ա՛յ Սոսին, սարի՛ ծաղիկ,
Սարի սեր, լարի՛ ծաղիկ:

Երկնքի կապույտն ի՞նչ է,
Արևի դեղինն ի՞նչ է,
էն կապույտ է երկնքից,
էն դեղին է արևից:—
Ա՛յ Սոսին, սարի՛ ծաղիկ,
Սարի սեր, լարի՛ ծաղիկ:



Հանդերի հովն'ր,
Դուք օրոր ելաք,
Արտերի ծովն'ր,
Դուք շորոր ելաք,
Իմ լարի բերից՝
Ընկա՛ր ձեր խելից
Հանդերի հովն'ր,
Արտերի ծովն'ր,

Սիրում ես՝ լա՛վը սիրիր—

էն տղեղ տղեն ի՞նչ է,
էն անբեղ տղեն ի՞նչ է,
էն անխելք տղեն ի՞նչ է,
էն անբելք տղեն ի՞նչ է,
էն անփութ տղեն ի՞նչ է,
էն անգործ տղեն ի՞նչ է,
Որ սիրես՝ դարդով մնաս,
Կոտորված սրտով մնաս:

Սիրում ես՝ լա՛վը սիրիր—

էս բեզ էն սիրուն տղեն,
էս բեզ էն դարուն տղեն,
էս բեզ էն բարձրք տղեն,
էս բեզ էն քաղցրք տղեն,
էս բեզ էն շենձեռ տղեն,
էս բեզ էն լենձեռ տղեն,
Որ սիրես՝ սիրո՞ւմ մնաս,
Յոթ որդով բարո՞ւմ մնաս:



Ինչի՞ է պետք
Անսեր մարդուն
Ոսկով լի տուն,
Արծաթե սյուն,
Խաղ ու խնդում,
Մուշ-անուշ քուն,
Ինչի՞ է պետք
Անսեր մարդուն:



Նստել եմ խալար գիշերիս,
Ծանրը ըուն կուգա երեսիս.
Զգիտեմ, անուշ ըո՛ւն առնեմ,
Թե՛ դնամ յարի սիրտն առնեմ.
Քուն երթա՝ նորեն ետ կուգա,
Յարն երթա՝ վախճամ թե չգա:



Հե՛յ, Մովսսար, է՛յ Մովսսար,
Որ ամպերին ես հավասար,
Հիմի քեզ մոտ կգա՜ն յարեր,
Որ կենեին բարձր քարեր,
Կթռչեին վերեններն,
Խրտնած հովվի բարկներն,
Որ գաղաթին քո երկնատուր՝
Կպոկեին արծվի փետուր,
Էրեի պես կիջեին վար,
Եղնիկի պես կելնեին սար,
Բե-թիկունքից ծամերը կախ՝
Կբաղեին կանկառ ու ժախ,
Արծաթ փաղիկ ու ոսկեծիլ,
Անուշ գաղղա ու խավարծիլ,
Որ իրիկվան կերթային տուն,
Մեկ մեկ հսկա խանդութ հաթուն,
Հիմի էլ կա՛ն էնպես յարեր,
Որ կենեին բարձր քարեր,
Հե՛յ, Դավթի սար սասունական,
Ասա՛, ասա՛, հիմի էլ կա՛ն....



Ա՛լբ, դու կուլաս ի՞նչ ապով:
— Ա՛խ, ես կուլամ է՛ն ապով,
Որ Բինգուա սարերուն
Բացվեց արև ու գարուն,
Որ հովեր կը զլզլան,
Որ ջրեր կը գլզլան,
Կծաղկեն ծիլ ու ծաղիկ,
Որ հազար լիճ խաղաղիկ
Բաց երկնի տակ կը խնդան,
Ծափ կառնեն ու ծափ կուտան,
Որ շկան խոր ու խաղաղ
Խորոտների թև ու խաղ,
Որ էն սարին, էն արոտ,
Ո՛չ հովվի փող ու ո՛չ հոտ,
Ո՛չ գոլթան ու ո՛չ հնձան,
Ո՛չ մարդ ու ո՛չ մարդաձայն...
Ա՛խ, ես կուլամ է՛ն ապով,
Սրտես կուլամ է՛ն ապով:



Ա՛յ աղբյուրիկ,
Պաղ-պաղ ջուրիկ,
Որ կը բխաս Բինգոլ սարեն,
Բինգոլ սարի մարմար քարեն,
Որ կանչելով,
Կարկաշելով,
Քրքշալով,
Կշկշալով,
Գիշեր ցերեկ կերթաս մեկնն,
Դու կը բխաս ո՞ր մեկ ակեն,
Ո՞ր մեկ ակեն
Ու լճակեն:

Ես չգիտե՛մ,
Ես է՛ն գիտե՛մ,
Որ մեկ անուշ
Կարկաշելով,
Որ մեկ վո՛ւշ-վո՛ւշ
Հառաշելով,
Գիշեր ցերեկ կերթա՛մ, կերթա՛մ,
Բինգոլն ունի հազար մի ակ,
Հազար հազար ակ ու լճակ,
Ես ի՞նչ գիտեմ՝ թե կըրթամ,
Ո՞ր մեկ ակեն,
Ո՞ր մեկ ակեն ու լճակեն:



Ա՛յ սև սևաւո՛ր հաւը,
Դեղին թեւաւոր հաւը,
Ասա՛, էն մեծ սարին
Տեսա՞ր դու իմ յարին:

Տեսա էն մեծ սարին
Քո սև սրտիկ յարին,
էն որ աչք ունի թուխ,
էն որ սիրտ ունի մուխ,
Մեջ էն սարի ամպին՝
Աչքը՝ յարի ճամփին:

Ա՛յս, սև սևաւոր հաւը,
Դեղին թեւաւոր հաւը,
Որ ետ դառնաս բարով,
Անցնես էն մեծ սարով՝
Որ դառնաս մեծ սարին՝
Ասա իմ թուխ յարին:—
Ամպը՝ սարի՛ն է մոտ,
Յարը՝ յարի՛ն է մոտ:



Չյունը հալվեց բարձր սարին,
Հալվեց, թափվեց մարմար քարին,
Ելնեմ երթամ հասնեմ յարին—
Միտըս կերթա առու-առու,
Հերի՛ք մնաս հեռո՞ւ, հեռո՞ւ

Ա՛յ իմ պստիկ, սրտիս մոտիկ,
Կորած կաթալ իմ խառուտիկ,
Կա՞ր քեզնից յար մի խորոտիկ
Միտըս կերթա առու-առու,
Հերի՛ք մնաս հեռո՞ւ, հեռո՞ւ

Գարնան կանչող հավքերն եկան,
Դար ու դուրան կանաչ հազան.
Արի՛, սիրած իմ սիրական,
Աչքըս կերթա առու-առու,
Հերի՛ք մնաս հեռո՞ւ, հեռո՞ւ...



Ինչքան յարեր սիրեմ,
Ինչքան սաշեր սիրեմ,
Սիրած յարերի մեջ,
Սիրած սարերի մեջ—
Դո՛ւ ես իմ մեծ յարը
Բոլո՛ր յարերի մեջ,
Հանց Արարատ սարը
Բոլո՛ր սարերի մեջ:



Կարմիր տոտիկ արտոտիկ,
Մի՛ բելն բոբիկ ոտիկ,
Որ բելն բոբիկ ոտիկ՝
Արուն կաթն իմ սրտիկ,
Որ կապեն կարմիր գոտիկ՝
Հարս դառնաս մանրատոտիկ,
Որ հարս դառնաս խորոտիկ՝
Շողաս հանց նռան հատիկ,
Որ դառնաս նռան հատիկ՝
Զարկես զիս պատն պատիկ,
Կարմիր տոտիկ արտոտիկ,
Մի՛ բելն բոբիկ ոտիկ:

269



Թողնեմ ու ղարիբ գնամ,
Կո՛ւտտ, բո դարդի՛ց, բո դարդի՛ց-
Գնամ ու ղարիբ մնամ,
Խո՛րոտ, բո դարդի՛ց, բո դարդի՛ց:

Ամպել եմ սև ամպի նման,
Ջե՛լրան, բո դարդի՛ց, բո դարդի՛ց-
Արաղի մութ շամբի նման,
Հե՛լրան, բո դարդի՛ց, բո դարդի՛ց:

Ղարիբ եմ, ետ գալ չեմ կարող,
Գառըս, բո դարդի՛ց, բո դարդի՛ց-
Լցվել եմ ու լալ չեմ կաշող,
Յարըս, բո դարդի՛ց, բո դարդի՛ց:



Անհրէ եկաւ շաղալով,

Ուրի տերեւ դողալով,

Շողի նման շողալով,

Քանց բաֆուր վարդ՝ թացվա՛հ ես:

Անձրե՛ւ, երակի՛դ մատաղ,

Շեղ անեղնակիդ մատաղ,

Վառման կրակիդ մատաղ,

Քանց բաֆուր վարդ՝ թացվա՛հ ես:

Անձրեւը առաւ արտին,

Արեւը վառաւ մարդին,

Բլբուլը շառաւ վարդին,

Քանց բաֆուր վարդ՝ խոցվա՛հ ես:



էս անավոտ, լուաք լուսին,
Մեռնեմ յարիս բոլ ու բռան,
Իջել պարտեղ վարդ կը քաղե,
Աչքը կուլա, սիրտն ուրախ է—
Սրտի՛ն մեռնեմ, սե՛ր կա իր մեջ,
Աչքի՛ն մեռնեմ, դե՛ղ կա իր մեջ:



Առաւմտ բարի լուսին.

Դու ելեր՝ սարը կերթաս.

Արեւ դար ու շուսին՝

Արեւ առեր՝ կերթաս.

Ա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ լուրի՛կ,

Վա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ քուրիկ:

Քո բելքը՝ կաքաւի բելք,

Մանրիկ ոտով ո՛ւր կերթաս.

Քո բելքը տարաւ իմ խելք,

Համ ու հոտով ո՛ւր կերթաս.

Ա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ լուրի՛կ,

Վա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ քուրիկ:

Յո՛ գար՝ ես բեզ առնեի,

Ասեի՝ սիրով կերթաս.

Առնեի՝ նո՛ր մեռնեի,

Իմ հողի վրով կերթաս.

Ա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ լուրի՛կ,

Վա՛խ, լուրի՛կ, անո՛ւշ քուրիկ:



Որ գլգլա քաղցրիկ առուն,
Հանդը պիտի ելնի գարուն:

Որ ցած իջնի շող ու շաղիկ,
Բացվի պիտի հաղա՛ր ծաղիկ:

Որ բարակ հովն ասի օրոր,
Ելնես պիտի սիրուն հացվոր:

Որ դաս երթաս հանդի միջով՝
Վառեմ պիտի թուշը պաշով:

Որ գլգլա սրտիս առուն,
Թողնի ձմեռն, ելնի գարուն:



էն լուսին մանր ու թեթեւ՝
Մտաւ ծանր ամպի ետեւ.
Ինչո՞ւ մտար, ա՛յ լուսին,
Սե ամպ ու դամպի ետեւ:

էն լուսին ամպի ետեւ՝
Իմ յարին էնքա՛ն նման.
էն ամպը ծանր ու թեթեւ՝
Յարիս տան դռան նման:

էն լուսին ամպի ետեւ՝
Դուրս կգա ամպի տակից.
Դուրս չի՞ գա յարըս թեթեւ՝
Տան սքե՛ղ ու դամպի տակից:



Ա՛յ իմ խորոտիկ,
Պատի՛կ արտուտիկ.

Բոբիկ մի՛ քելե՛ փուշ մտնի ոտիկ,
Փուշ մտնի ոտիկ, ցավի իմ սրտիկ.
Հագի՛ր կարմիր սուլ, գնանք գողոտիկ,
Սե՛ր տանք, սե՛ր առնենք՝ մեջ կանաչ խոտիկ,
Մութին ետ դառնանք հանց հառն հատիկ,
Վա՛յ իմ արտուտիկ,
Պատի՛կ խորոտիկ:



Թե հաս, թե չհաս,
Քաղողըդ հ'ս հմ.
Թե թանկ, թե էժան,
Գլխողըդ հ'ս հմ.
Թե աղտ, թե ալգի,
Պահողըդ հ'ս հմ.
Թե փուշ, թե ցորեն,
Հանողըդ հ'ս հմ.
Թե դաս, թե չդաս,
Տանողըդ հ'ս հմ:



Դու գնա ալդին՝ ևս կուգամ,
Հետ քո շուքին ևս կուգամ.
Հետ քո ոտքին ևս կուգամ,
Հետ քո քելքին ևս կուգամ,
Հետ քո նշխին ևս կուգամ,
Հետ քո էշխին ևս կուգամ,
Դու գնա ալդին՝ ևս կուգամ,
Հետ քո շուքին ևս կուգամ:



Գիշերս ելա գուրս,
Ամպ մի ցոլուն տեսա,
Բոլոր լուսին ու լույս,
Թաթախ մի ձյուն տեսա.
Ձյունի հետքով գացի,
Յարբս իրուն տեսա,
Շող երեսը բացի՝
Բարձր գլխուն տեսա.
Կզա թե պաղ առնեմ,
Աչքը զարթուն տեսա,
Պաղ առնեմ, նո՛ր մեռնեմ,
Սիրտըս արյուն տեսա:



Քեզ չե՛մ ասի դարդըս,
Կերթամ ծառի՛ն կասեմ,
Էն չսի դարդըս՝
Կերթամ քարի՛ն կասեմ,
Էն չսի դարդըս՝
Կերթամ սարի՛ն կասեմ:

Քեզ չե՛մ ասի դարդըս:



Ա՛յ գլղլան առու,
Ա՛յ գլղլան առու,
Գիշեր ցերեկ կերթաս
Հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ:

Ա՛ռ իմ բարեք տար,
Ա՛ռ իմ արեք տար,
Խռով յար մի ունեմ
Հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ:

Զուր ու հուրն իրար հետ,
Սեր ու սուրն իրար հետ,
Մենակ մե՛նք ենք բաժան,—
Հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ:

Ս Ի Ր Ե Ր Գ

Իմ նո՛ր յար,
Անուշ խորոտ,
Իմ հազա՛ր
Տարվա կարոտ:

Դու այնպե՛ս,
Այնպե՛ս մեղմիկ
Նայում ես,
Լուսա՛շք հղնիկ:

Դու իմ սե՛ր,
Երբեք չատած.
Իմ հին տեր՝
Այսօր գտած:

Իմ նո՛ր յար,
Սե՛ր իմ կանաչ,
Իմ հազա՛ր
Տարվա ճանաչ:



ԽԱՆՈՒՆ ԵՐԳԵՐ





ԳԱԼԻԲ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Շունդ ու շաշով, ահով ահագին—դու բացվե՛ս պիտի:
Ոսկու և արյան զաղիր աշխարհքին—դու բացվե՛ս պիտի:

Բացվես և սրբես ընչաբաղցության կիրքը մոլեգնած,
Որպես բռնուցքված սուսեր զայրագին—դու բացվե՛ս պիտի:

Հայրենի աչքով նայում եմ ահա մութին արնաբույր,
Ազգերի վրա կռվող, մահագին՝ դու բացվե՛ս պիտի:

Սահմանից այն կողմ—մարդը մարդու դեմ, սուրը սրի դեմ,
Վիզով զայրությքդ տված տնանկին՝ դու բացվե՛ս պիտի:

Ահա՛ սարսում են ժանդ մելիքները ընդմիշտ կործանվող,
Նման մեծ Դավթի Թուրք Կայծակին՝ դու բացվե՛ս պիտի:

Ջ ՈՒԼ Հ Ա Կ Ը

Հին Թիֆլիզի մի քուչայում, ծեր ջուլհակի փր-ուստա,
Փայտից շինած դաղդահի մոտ, աբեի տակ խանձելած,
Ամբողջ օրը վարժ մաքրկն է նետում արագ ու վստահ,
Մի պատանի՝ սև մազերը մինչև ուտերը իջած:

Եվ նետում է և հետոն երգում... Իսկ մի հուրի, հիացած,
Սիրո խոսքեր է շշջում. «Ջուլհակ տղա՛, ա՛յ տղա՛,
Երգի՛ր, երգի՛ր դու ինձ հաճար, տե՛ս, մաղերի մոտ նստած,
Ամբողջ օրը քե՛ղ եմ լսում, ջուլհակ տղա, ա՛յ տղա՛...»

Նայում է վեր... Ա՛խ, ինչո՞ւ է սիրտը այնպես բաբախում,
Եվ մատները շփոթվում են թելերի մեջ սպիտակ.
Հրանման ծաղիկներ են շառագունում կրճերի տակ:

Եվ պատանի ջուլհակ տղան, այդ նոր հույզով շղջողուն,
Մեկնում է իր սիրաբորբոր հանճարեղ ձեռքը սաղին,
Կրակ սիրո խա՛ղ ու տաղով հիացնելու Թիֆլիզին:

Հ Ե Ռ Ա Ս Տ Ա Ն Ն Ե Ր

Ո՛վ երկների հեռաստաններ, ո՛վ աշխարհներ դեռ անհայտ,
Սիրիոս, Օրիոն և Արշաստըղ, և դո՛ւք, աստղեր անանուն,
Դուք, որ պիտի բացվեք մի օր՝ մարդու մտքի դեմ անհուն,
Եվ աչքի դեմ ամենատես, և ձգտումի անընդհատ:

Ո՛վ կապույտի վրա բացված անձեռագործ Միքն կաթ,
Եվ Կշեւը աստղ ոսկենժար, և դու, Լուսաստղ փողփողուն,
Լուսին, լույսի անբավ սափոր, որ հեղում ես առատ կաթ,
Դու հավերժի աչքը միշտ բաց՝ լույս ու խավար երկներում:

Դուք կբացվեք մի օր, ահշուշտ, դարաւ Մարդու աչքի դեմ,
Նո՛ր Մարդու դեմ, որ իշխում է մոլորակում երկրալին,
Նո՛ր Մարդու, որ դժոխք կլանքը վերստեղծում է եդեմ:

Ահա՛ մեր միտքն արագընթաց՝ ձգված ձեր խոր երկներին,
Բացե՛ք ձեր փակ հեռաստաններն ու խորհուրդները ձեր փակ,
Եվ երկրի պես ընկե՛ք ընդմիշտ մեր մտքի և ոտքի տակ:

Ն Ի Զ Ա Մ Ի

Ֆիրդուսու պես, ո՛վ իմաստո՛ւն, մեծ է ձեռքըդ, Նիզամի,
Ահանակուռ ու ոսկեհուռ, մեծ է երգըդ, Նիզամի:

Շրթունքներդ դոհար աղբյուր՝ մարի բարձրից վար իջնող,
Սիրո տեգով սիրտըդ խոցված, մեծ է վերքըդ, Նիզամի:

Հրե հույժը հորդում է հար հողուդ անհուն ակունքից,
Հնդկաստանի անալի ծովից մեծ է խելքըդ, Նիզամի:

Արբենում է մարդու հողին՝ ով պարտեզն է մտնում ըս,
Վառող, վառվող վարդեր ունես, մեծ է բերքըդ, Նիզամի:

Կանցնեն դարեր, կգան նորեր և սերունդն՝ կանեն,—
Ֆիրդուսու պես, ո՛վ իմաստո՛ւն, մեծ է ձեռքըդ, Նիզամի:

ՇԱՅԻՐ ՄԻՐՉԱ ՇԱՅԻ

Նրա սրտում կան լուր կարոտներ,
 Եվ անհույս սեղեր—անդարձ բեկված,
 Երկներանգ թերե ու նարոտներ,
 Եվ ուտենիներ՝ ջրին հակված.
 Եվ հեռու, հեռու, երազական
 Սիրո և հույսի վառ հիացում:
 Եվ գորովանքներ կնոջական,
 Եվ վարդյա դինի, և աղբեցում:
 Եվ հորդուն հույզեր՝ ալեկոծ ծով,
 Եվ մտքեր թռչող ու կաժակին,
 Իմաստություն, որ պայծառ բոցով
 Հավերժ գերում է մարդու հոգին:
 Եվ ահա դաշտով հին Կալկալի,
 Բռնած լուսեղեն մի արահետ,
 Մեղրաշուրթ շալիր Միրզա Շաֆին
 Քայլում է բլրով Հաֆլզի հետ:

ԳԱԼԻՔ ՊՈՆՏԸ

Իմ բանաստեղծ բարեկամ, դու կհիշես երևի
Այն պատանի պոետի տետրակները կապտագիր,
Այնտեղ կար մի դալար սիրտ, մի պարզ երկինք ու երկիր,
Շառագունված լույսերով ստալինյան արևի:

Կհիշես և ա՛յն երգը, որ մի ճերմակ արագիլ
Վերադարձել է գոլուտ ճահիճներից հարավի:
Մեր նոր գյուղի երգերը—առանց վշտի ու ցավի,
Զարմանալի պարզություն, զարմանալի սրտագիր:

Ո՛վ իմանա, դուցե նա—լինի մի նոր թումանյան,
Գուցե արդեն սպասվող մի կարմրասիրտ Հովեյոս,
Որ պիտի գա երդելու դարն այս հախուռն ու հերոս:

Ո՛վ իմանա... Բայց նայենք ապագային ո՛չ հեռուն,
Քանզի նրա աչքերում, սեեռած մեծ Դպրության,
Մի հուր կար մեր օրերից և կյանք՝ հորեկ երգերում:

ԵՐԳ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՍԻՆ

Աշխարհում շատ ու շատ բաղաճներ են եղել
եվ շատ բաղաճներ կան երկրագնդի վրա:
Բայց դու այլ ես,
Մոսկվա՛,
Քաղաք լույսի,
Ազատության,
Քաղաք հղորության,
Հուլիսի:

Դեռ հեռավոր, հեռու մանկությունից,
Այն օրերին, երբ աշխարհավեր
Մարտի ծանր ոտքը տրորում էր ծաղկուն
Մեր դաշտերը համայն,
Ես բեզ տեսա,
Տեսա,
Երբ մեր գյուղի կանաչ դաշտում կրկացին
Հաղթանդամ և շիկագանգուր
Կողակները...
Դարերի խոր իդձը, որպես աղաղակող
Ցնծություն ու հրճվանք,
Պայթեց մեր կոկորդում.
— Ուռուս բեռին եկա՛մ,
Քեռի՛ն...

Մոսկվա՛,
Հնո՛ւց,
Հնո՛ւց,
Հնո՛ւց,
Մեր պապերի և մեր մանուկների հոբհոբ
Երազանքն ես եղել,
Մենք շոշափել ենք բեզ մեր հոգուն մանուկնրո՛վ:

Մենք դուրդուրե՛լ ենք քեզ,
Եվ քո վեհ անվան մեջ
Տեսել ենք հնօրյա
Հզոր պաշտպանյալին.
Տեսել ենք Ռուսեթի ծովը լայնածալալ
Որ հորձանքով եկավ,
Հասավ Քսենոֆոնյան մեր հյուղակները խուլ՝
Բերելով հույս ու լույս,
Բերելով անկաշկանդ հոգու թռիչք...

Եվ այսօր, այսօր երբ երգում եմ ես քո սեգ
Անվան կրգը,
Մոսկվա՛,
Երգում եմ, կրբ այսօր
Քո վեհության,
Քո զննությա՛ն մասին,
Միտքըս թռչում է քո անցյալը մեծապանծ,
Եվ իմ աչքերի դեմ
Կանգնում են բողազիդ որդիներդ,
Որդիներդ բարի՛,
Հզո՛ր,
Անհա՛ղթ:

Եվ տեսնում եմ այնժամ՝
Քավար միջնադարի խավարի մեջ.
Դու կանգնում ես կանգուն
Քո պալատներով, քո ոսկե դմբեթներով.
Եվ հար անհաղթելի
Հզոր մի ժողովուրդ՝
Անընդմեջ կոփում է դարերի փառքը քո:—

Ահա Մուրոմեցյան հարվածներիդ ներքո
Ծովում,
Փշրվում են
Քաթարական դժնի տեղերը պղնձյա.
Ջախվում են ասիական հորդանները
Մի ստեպից ստեպ...
Ոճրի և քսության ժաշոտ սրչը,—
Ստամբուլը,
Սուլթաններով ահա բերանբսկվալը
Խոնարհվում է հզոր գայադնիդ առաջ:

Մոսկվա՛,

Դարերով դու կանգնած պողպատեղին պարիսպ
Այլազան ազգերի բանակների ընդդեմ:

Դու կասեցրիր խաչով ու շնությամբ
Զինված տեսնական ասպետներին.

Դու կասեցրիր գոռոզ, ամբարտապան
Քաղցած բանակները Բոնապարտին

Նա բեղ ստորաբար այրեց,
Նա բեղ այրեց,

Մոսկվա՛,

Բայց դու հրդեհ եղար հենց այրողի համար:

Քո դարերով մղած պայքարները բաղում

Պսակվել են շրեղ դրասանդով,

Պսակվել են հաղթական կամարներով,

Որոնց տակով, հպարտ, նույնիսկ նստած,
Անցան Նեսկինե՛ր,

Դոնսկոյնե՛ր,

Պոժարսկինե՛ր և Մինինե՛ր:

Քո հաղթական կարմիր կամարների տակով

Անցավ ժողովուրդն Ռուս,

Իբրև ամենահաղթ,

Ամենագոր,

Բարձր պահելով պատիվը բո,

Կամբը բո,

Ջանքը բո...:

Մոսկվա՛,

Սիրտդ դու ութդարյան ազատության,

Բաբախեցիր դու լոկ

Խրդախության՝

Հերոսության

Եվ բաշության՝ համար:

Ինչպես անբակտիլի գրանիտյա մի բեկ:

Կանգնած ժամանակի հիմքի վրա,

Հար անխորտակ նույն այդ ժամանակի նժան,

Դու առավել ուժով լցվեցիր երբ

Շառաչեց բո անծայր՝ փողոցներում

Հոկտեմբերյան երգը՝ մրկաշունչ...

Քեզանի՛ց,
Քո սրտի՛ց
Վեր բարձրացավ կարմիր դրոշն ալեծածան
Ու ծավալվեց անծայր ստեպներում:

Դո՛ւ մղեցիր առաջ,
Դու մղեցիր
Քո մեծ ու քաջազուն Ռուս ժողովրդին
Դեպի արդար պայքար:

Այն օրերին, երբ բիրտ, ըսաներորդ դարի
Դարչնագույն դնչերը, ահագնած ու մթին,
Ֆանգնեցին ամրափակ դարպասներիդ առաջ,
Երբ Բեռլինյան որջում որոճում էր
Ֆեյառ մարդասպանը,
Սպիտակ ձին հեծած,
Կրծքին շքանշան բռնության ու մահի,
Անցնել բո կրեմլի հրապարակներով,
Դու կանգնեցիր խրոխտ
Շվ՛ անհողդողդ,
Քո պարիսպների տակ ջախջախվեցին նրանք,
Ի փառս բե՛զ,
Ի պատիվ բե՛զ,
Ի հավերժություն բե՛զ:

Մոսկվա՛,
Դեպի բեզ է դարձած պայքարող մարդկության
Բեզանով մագնիսված հայացքները.—
Եվ բանվորը Ռուրի,
Եվ ձկնորսն հունական,
Եվ Ուալ-Ուալի հաբեշը, որ դեռ խեղճ
Պառկում է կիսամերկ՝ այծի մորթու վրա:

Քեզ է նայում այժմ աշխարհը ողջ,
Դու ես ընթացք տալիս կյանքի
Ամե՛ն մի բաբախին:
Դու հզո՛ր ես,
Հզո՛ր,
Ինչպես հզոր երբեք դեռ չի եղել
Երկրագնդի վրա ո՛չ մի թաղար:

Մոսկվա',
 Հուլիսի անբավ կենտրոն,
 Անխար Հուլիսի օվկիան,
 Մավալո՛ւն ես դու, ինչպե՞ս պայծառ ցերեկ.
 Քո կոփածո հուժկու բանվորներով,
 Ֆարրիկաներով ըս,
 Գործարաններով ըս,
 Շարժումով ըս,
 Որի միջից ամեն, ամեն՝ ըսպե,
 Որի միջից ամեն՝ Վալրկյան,
 Կոփվում է պատմության երանելի բախտը
 Ֆվ գալիքը այնքա՛ն հրաշալի,
 Որ բերում է ահա մարդկությանը
 Դեպի բեզ, օ՛, հսկա',
 Համաշխարհայի՛ն դու մայրաքաղաք...:

Նրեան
 1944—1947



1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

1894

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊՈՂՈՏԱՆՆԵՐ

Մեծ Հոկտեմբերին	5
Պողոտաներ	8
Քարտաշները	13
Յրգ խաղաղության	18
Երևանի ջուրը	22
Երգը	26
Հաղթանակի օրն է	32

ԳՅՈՒՂՆ ԻՄ՝ՈՍԿԵՎԱԶ

Հինգ մատների պես	37
Կալեր	38
Հասկեր	40
Երեքնուկ	41
Կոշի բարդիները	42
Աշտարակ	43
Արևի դուռը	44
Հայրենի սեղան	45
Փշատենի	46
Սինոռներ	47
Անձրե	48
Աշունը	49
Ոսկու կարասը	50
Գլուղի գիշերը	51
Հեղի	52
Ջարթոնք	53
Հիպոկատի	54
Արտի դիմաց	55
Առունք	56
Ձմեռ	57

	Էջ
Կարոտ	59
Գյուղեր	60
Արարատյան դաշտում	62

ԱՄՊՐՈՊԻՑ ՀԵՏՈ

Իմ հայրենիքը ահա	67
Իմ երկրի մարդկանց	68
Ինչո՞ւ...	69
Վերադարձ	70
Սպիներ	71
Վայելք	72


ԶՄԲՈՒՆՏ ԲԼՐՈՒՆ

Առուն կերթա	75
Մենակ ես չեմ	76
Օրոցք զարկեմ	77
Կը խոսեին	78
Ա՛յ իմ սիրուն	79
Լուսին	80
Ծովաչք տղա՛	81
Արի՛ երթանք	82
Հանդերի հովեր	83
Սիրում ես՝ լա՛վք սիրիք	84
Ինչի՞ է պետք	85
Նստել եմ	86
Հե՛յ Ծովասար	87
Ա՛չք, դու կուլաս	88
Ա՛յ աղբյուրիկ	89
Ա՛յ սև սևավոր	90
Զյունը հալվեց	91
Ինչքա՛ն յարեր	92
Կարմիր առտիկ	93
Թողնեմ ու դարիք գնամ	94
Անձրև եկավ	95
Էս առավոտ	96
Առավոտ բարի լուսին	97
Որ գլզա	98
Էն լուսին	99
Ա՛յ իմ խորտակ	100

	էջ
Բե հաս, թե չհաս	101
Դու դնա՛ ալգին	102
Դիշերըս ելա դուրս	103
Քեզ չե՛մ ասի դարդս	104
Ա՛յ գլգլան առու	105
Սիրերդ	106

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ


Գալիք Հոկտեմբերին	109
Ջուլհակը	110
Հեռաստաններ	111
Նիզամի	112
Շալիք Միրզա Շաֆի	113
Գալիք պոետը	114
Սրգ Մոսկվայի մասին	115




Պատ. խմբագիր Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Նկարիչ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ
Տեխ. խմբագիր Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

ՎՖ 02713. Պատվեր 553. Տիրաժ 4000:
Տպագր. 7³/₄ մամ., հեղինակային 3,6 մամ..
Հանձնված է արտագր. 10/XII 1947 թ.
Ստորագր. է տպագր. 2/III 1948 թ.

ՀՍՍՌ Մենիստրոների Սովետին
Կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Երևան,
Արավելյույան 65,
1948 թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029908

301

4462 8 16

A $\frac{11}{29908}$